

Աթլանթայի դաշնակցային վերադարձ ատենարը երկվ մերձեց Թեքսասի կառավարիչ ձորձ Ուոքլըր Պուշի դիմումը՝ կանգնեցնելու Ֆլորիդայի մէջ քուէներու ձեռքով հաշուումը, որ փոխ նախագահ Ալ Կորի համար կը նկատուի ձախտագրական քայլ մը, Սպիտակ Տուն հասնելու համար: Այսուհանդերձ ձեռքով հաշուելու գործընթացը աւարտած էր նախքան որոշումը: Ալ Կոր կը ճնշէ, որ պէտք է Ֆլորիդայի որոշ քառնութիւններու մէջ քուէները ձեռքով հաշուուին, այն յոյսով, որ կրնայ արդիւնքին պատկերը փոխուիլ:

(ՌՈՅԹԸՐԶ)

ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ՄԱՍՆԱԿՑԵՅԱԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԻՆ

ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՔՆՆԱՐԿԵՑ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԵՐԸ ԵՒ ՏՈՒՄԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԵԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Նախարարաց խորհուրդը երէկ իր հերթական ժողովը գումարեց հանրապետութեան նախագահ Վոր. Էմիլ Լահուտի գլխաւորութեամբ եւ ներկայութեամբ վարչապետ Ռաֆիք Հարիրիի եւ նախարարներուն. երէկուան ժողովին մասնակցեցաւ նախարար Անպոլի Յովնանեան, որ աւելի քան ամիս մը առկայած էր իր մասնակցութիւնը:

Կեցուածք մը», ըսաւ նաեւ Լահուտի. «Այժմ քայլ մը եւս առած ենք այս հարցին լուծման ուղղութեամբ, եւ կը յետեւանք յարգարժան հայ համայնքին պատկանելի շատերուն տեսակետը, թէ պէտք է գործադրել կառավարութեան անցեալ շարժումներու նիւտին այն հաստատումը, թէ անհրաժեշտ է, նշանակել երկրորդ հայ նախարար մը: Հաղորդակցութիւնները կը շարունակուին, բայց այս հարցը հանրապետութեան նախագահին եւ վարչապետին իրաւասութիւններէն է»:

ՆԻՍՏԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Նախարար Արիտի յայտնեց, որ նախագահ Լահուտի նիւտի սկիզբին պահանջած է քննարկել երկրին եւ շրջանին ընդհանուր քաղաքական իրավիճակը: «Ուստի, նախարարաց խորհուրդը քննարկեց իր խորհուրդի շրջանային վիճակը եւ ի սրայէլի ներքին իրաւափոխումը, որուն հիմնական պատճառը

խաղաղութեան գործընթացի Մատրիտի մէջ ճշդուած ուղեգիծէն դուրս գալն է», ըսաւ Արիտի, նկատել տալով, որ այս սայթաքումը իսրայէլը մատնած է նեղ կացութեան, եւ բոլոր կողմերը եզրակացուցած են, թէ միակ լուծումը արդար է ամբողջական խաղաղութիւնն է: «Այս խաղաղութիւնը հիմնուած պէտք է ըլլայ արարական բռնագրաւեալ հողերէն իսրայէլեան հեռացումին ու պաղեստինցի գաղթականներու տունդարձի իրաւունքին ճանաչումին վրայ», աւելցուց ան:

«Կառավարութիւնը այս առիթով նկատել տուաւ, որ Լիբանանի պաշտօնական կեցուածքը գիտակցութիւն է հաւաստիութիւն ցուցաբերեց, երբ ամբողջ առանձին լուծումներ, նոյնիսկ երբ սաստիկ ճնշումներ ի

Տար. Էջ 10

ՊԱՂԵՍՏԻՆՅԻՆԵՐՈՒՆ ՊԱՇԱՆՁԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՐՆԱՆ ՍԿՍԻԼ ՅԱՌԱՋԻԿԱՅ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ԿԱՄ ԵՐԵՔԱԲԹԻ

Եզրիպտոս երէկ յայտարարեց, որ Իսրայէլ պէտք է վերջ տայ պաղեստինցիներուն դէմ ուժի գործածութեան, եթէ կ'ուզէ վերսկսել Միջին Արեւելքի խաղաղութեան բանակցութիւններուն:


Արտաքին գործոց նախարար Ամր Մուսա, որ կը խօսէր նախագահ Հիւսնի Մուպարաքի եւ պաղեստինեան իշխանութեան նախագահ Նասիբ Արաֆատի միջեւ տեղի ունեցած հանդիպումի մը աւարտին, դիտել տուաւ, որ կարելի չէ այս կացութիւնը շարունակել, ուր պաղեստինցիները օրական յարձակումներու կ'ենթարկուին: Մուսա աւելցուց, որ պէտք է վերադառնալ 28 Սեպտեմբերի նախօրեակին տիրող կացութեան:

Մուսա ըսաւ նաեւ, որ պաղեստինեան իսրայէլեան բանակցութիւնները, որոնք սկսած են Օսլոյի համաձայնագրին լոյսին տակ, ունին իրենց թերութիւնները, որոնք պէտք է սրբազորուին:

Արաֆատ Գաճրիէ այցելած էր տեսակցութիւն ունենալու համար Մուպարաքի հետ: Երկու ղեկավարները անգամ մը եւս քննարկեցին պաղեստինեան շրջաններուն մէջ տիրող իրավիճակը: Հանդիպումի աւարտին Արաֆատ եւ Մուպարաք յայտարարութիւն չկատարեցին:

Պաղեստինեան իշխանութեան ծրագրումի նախարար Նապիլ Շաաթ ըսաւ, որ Իսրայէլի հետ խաղաղութեան բանակցութիւններուն վերսկսելը կախեալ է հրէական պետութեան, որ ամէն բանէ առաջ պէտք է վերջ տայ բռնարարներուն եւ պաղեստինեան շրջաններուն պաշարման ու փակման: Իսրայէլ նաեւ պէտք է քանդէ պաղեստինեան զիջուած քաղաքներուն մէջ կառուցած բնակեցման վայրերը, պատրաստուելու համար շրջանէն ամբողջական հեռացման: Շաաթ դիտել տուաւ, որ այս պայմաններով է միայն, որ պաղեստինցիները բանակցութեան սեղան պիտի վերադառնան:

Ամր Մուսա պաղեստինեան շրջաններուն հարցը երեքշաբթի գիշեր քննարկած էր Եւրոպական Միութեան յատուկ պատուիրակ Միկէլ Անիէլ Մորաթինոսի հետ, որ միջինարեւելեան երկիրներու շրջապատյալ մը ձեռնարկած է: Մորաթինոս ըսաւ, որ կացութիւնը կը



Պաղեստինցիներ կը պաշտպանուին իսրայէլացի զինուորներու արձակած փամփուռներէն:

մնայ վտանգաւոր, չհառակ անոր, որ բախումները մեղմացած են: Ան շեշտեց, որ ճիշտ պէտք է տարուի կիրարկելու համար Շարմէշ լիցի համաձայնութիւնը: Յիշեալ համաձայնութիւնը, զոր հովանաւորած էր Միացեալ Նահանգներու նախագահ Պիլ Գլինթըն, չէր յաջողած վերջ տալու բախումներուն:

Մորաթինոս աւելցուց, որ բանակցութիւնները պէտք է վերսկսին ամէնէն կարճ ժամանակամիջոցին մէջ: Ան աւելցուց, որ Եւրոպական Միութիւնը ուղղակի դերակատարութիւն ունի խաղաղութեան գործընթացին մէջ: Եւրոպական Միութեան արտաքին գործոց նախարարները Երկուշաբթի օր համաձայնութիւն գոյացուցած էին նիւթական յաւելեալ օժանդակութիւն տրամադրելու պաղեստինցիներուն, եթէ պաղեստինեան իշխանութիւնը պահանջ ներկայացնէ:

Մուս կողմէ, պաղեստինցիները երէկ վերստին շեշտեցին, որ կազալի եւ Այսրորդանանի ինթիֆատան կանգ պիտի չառնեն, եւ թէ իրենք դէմ պիտի կանգնեն

Տար. Էջ 10

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՅՍՕՐՈՒԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԸ ԲԱՐԳ ՀԱՐՑԵՐ ՈՒՆԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՎՐԱՅ

Եւրոպական Միութեան ղեկավարները այսօր Ֆրանսական Նիս քաղաքին մէջ ընթացող պիտի կատարեն վեհաժողովի մը, որ կ'ընայ տարիներէ ի վեր ամէնէն երկարը եւ ամէնէն զտուարը ըլլալ:

Վեհաժողովին բանակցութեանց առանցքը պիտի կազմեն 15 անդամ հաշուող պլոքին «սահմանադրական» մեծագոյն բարեկարգումները 1991ի Մասթրիխտի համաձայնագրին գոյացուցածն ի վեր: Չախողութեան հաւանականութիւնը մեծ է:

Եթէ ղեկավարները չյաջողին համաձայնել թերթի ըրող բարեկարգումներուն շուրջ, որոնք անհրաժեշտ են որպէսզի Եւրոպական Միութիւնը կարենայ գործել Արեւելքէն տասնեակ մը նոր անդամներ ընդունելէ ետք, դիւանագէտները կը զգուշացնեն, թէ Միութեան ընդարձակումը ընթացքէն դուրս պիտի գայ եւ եւրոպի նորագոյն վերելքը սպառնալիքի տակ պիտի դրուի:

Եւրոպական Յանձնաժողովի նախագահը՝ Ռոմանո Փրոտի, վեհաժողովին յաջողութեան 50 առ հարիւրի կարելիութիւն մը կը տեսնէ:

Յրանսա, որ կը հիւրընկալէ վեհաժողովը, ըսած է, թէ ձախողութիւնը կը նախընտրէ «կէս եփած» համաձայնութիւն մը: Եւրոպի ընդարձակումը գերմանացի անդամ էլմար Պրոք յայտնած է, թէ Նիսի մէջ ձախողութիւն մը թեկնածու երկիրներու եւ Միութեան համար ապահովութիւնը եւ կայունութիւնը պիտի վտանգէ եւ վնաս պիտի հասցնէ եւրոպական մեծ ծրագրի ներքին, ինչպէս՝ եւրոպիին: Միջկենսածու երկիրները Միութեան դռները կը բախեն, պլոքը ճնշումի տակ է անոնց անդամակցութեան համար յստակ թուականները ճշդելու: Սակայն անիկ անմաս քայլ չի կրնար առնել մինչեւ որ համաձայնութիւն գոյացնէ. թէ պլոքը ինչպէս պիտի գործէ՝ իր լայնատայն Ռոմանիա եւ Նորվեգիայէն կիսորտ, տարածուելէ ետք, շուրջ 500 միլիոն բնակիչներով:

Վեթուերը ՍՊԱՆԱԼԻԹԻ ՏԱԿ

Նիսի վեհաժողովը պէտք է որոշէ, թէ բանալի 3 բարեկարգումներու հաւանութիւն պիտի տա: Պաղեստինցիները, թէ անոնք ամ պետութիւնները իրենց ազգային վերջին պիտի հրաժարին՝ քաղաքականութեան 50 նոր մարզերու մէջ: Ներկայիս, Ե. Միութեան որոշումներուն աւելի քան 85 առ հարիւրը

Տար. Էջ 10

ՀԱՅԵՒՉԻՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԸՆՆԱՐԿՈՒՄԻ ԱՌԱՐԿԱՅ

Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեան երէկ Շահնէզի մէջ հանդիպում ունեցաւ քաղաքապետ Սուրբ Քուստուրի հետ:

Անդրադառնալով երկու ժողովուրդներուն միջեւ բարեկամական յարաբերութիւններու եւ հայ-չինական գործակցութեան, վարչապետ Մարգարեան նշեց, որ Հայաստանի կառավարութիւնը կարեւոր կը նկատէ օտար ներդրումները, որոնց համար օրէնսդրական լուրջ դաշտ ստեղծուած է: Ան ըսաւ, որ օտար ներդրողներու կարգին Հայաստան կ'ուզէ տեսնել նաեւ չինական ընկերութիւններ եւ պատրաստ է իր կարգին միացեալ ձեռնարկութիւններ հաստատել Չինաստանի մէջ: Այս առումով ան կարեւոր նախադէպ նկատեց Չինաստանի մէջ քառուղի միացեալ ձեռնարկութեան հիմնադրումը: Նմանօրինակ գործակցութեան ներուժը մեծ է եւ կրնայ ընդգրկել նաեւ վերամշակուող եւ թեթեւ արդիւնաբերութեան մարզերը: Վարչապետ Մարգարեան գործակցութեան կարեւոր այլ մարզ նկատեց գրամատուցային համակարգը:

Իր կարգին, քաղաքապետ Քուստուրի մանրամասն ներկայացուց քաղաքի տնտեսական իրավիճակը, ծրագրուած տնտեսութեան շուկայական տնտեսութեան անցումային շրջանին ձեռք բերուած յաջողութիւնները: Ան ըսաւ, որ կան փոխադարձ հետաքրքրութիւններ կայացնող գործակցութեան մարզեր, զորս պէտք է լրջօրէն ուսումնասիրուին:

ՆԱԽԱՐԱՐ ՕՍԿԱՆԵԱՆԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀՆԴԱՍՏԱՆԻ ՍԷՋ

ԵՐԵՒԱՆ, 6 (ԱՐՄԵՆՓՐԵՍ).- Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան Հնդկաստանի մէջ երեքշաբթի օր հանդիպում ունեցաւ Հնդկաստանի արտաքին գործոց նախարար Շաւարձ Միքիլի հետ:

Հանդիպումին քննարկուեցան երկկողմանի քաղաքական եւ տնտեսական յարաբերութիւններու առընչուող հարցեր, ինչպէս նաեւ միջազգային կազմակերպութիւններու մէջ գործակցութեան կարելիութիւնները: Նախարար Օսկանեան ներկայացուց Լեռնային Ղարաբաղի տագնապին լուծման գործընթացը:

Նոյն օրը, նախարար Օսկանեան հանդիպում ունեցաւ Հնդկաստանի առողջապահութեան նախարար Թակուրի հետ: Հանդիպումին քննարկուեցան բժշկական մարզի, մասնատրաբար՝ ղեղազորութեան, բժշկական սարքաւորումներու, մասնագետներու փոխանակման եւ միջամասշտաբական ուղղութեամբ գործակցութեան անընդունակ հարցեր: Նախարար Օսկանեանի գլխաւորած պատուիրակութիւնը երէկ Երեւան վերադարձաւ:

ՀԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՄԱՐ
LՈՅՍ ՏԵՍԱԿ

ՀԱՅԱՆՈՑ ԹԱՂԵՐՈՒ ԻՆՔՆԱՊԱՇԵՏՊԱՆՈՒԹԵԱՆ 25ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ «ԱԶԳԱԿ» ԸՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ
ՀԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՄԱՐ
Պատմական - վկայական ընդլից գիրք մը, որ կը ներկայացնէ 1975-1990 լիբանանահայութեան ինքնապաշտպանութեան առօրեան իր գանազան երեսներով: 416 էջ, 11 գլուխ:
● Ազգային եւ քաղաքական փորձառութիւններ
● Արժեքներ
● Պատմութեան համար
● Վկայութիւններ եւ վերլուծումներ
● Ուղեւոր կը լինենք...
● Յիշատակներ
● Հ.Յ. Դ. եւ հայրենական դէմ ոճիրներ
● Հայրենական արձագանգներ
● Սփիւռեան արձագանգներ
● Հին օրերու վկայութիւններ նոր օրերու համար
● Թիկունքի քաղաքացիները
Ստանալ «Ակրակ» ջրուղիներէն կամ հետեւեալ գրախանութիւններէն.— «Համազգային», «Նարեկացի», «Ոսկեղար», «Ուրֆայեան», «Obelisk» եւ «Կոմիտաս»: Սակ՝ 15,000 Լ. Ը.:

ՀԱՅՏԵԼՈՒԹԻՒՆ ԻՏԱԼԻՈՅ ԴԵՍՊՈՒՆԻՆ
Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն ներկայացնող պատուիրակութիւն մը Չորեքշաբթի, 6 Դեկտեմբեր 2000ի կէսօրուան ժամը 12:00ին, այցելեց Իտալիոյ դեսպանատուն, ուր տեսակցութիւն մը ունեցաւ Լիբանանի մէջ Իտալիոյ դեսպան Ժուլիանի Բասիլիին հետ:
Պատուիրակութիւնը նախ ղեկավարին գոհունակութիւն յայտնեց՝ 17 Նոյեմբեր 2000ին Իտալիոյ խորհրդարանին կայացուցած այն որոշումին համար, որ պաշտօնապէս կը ճանչնար Հայկական Յեղափոխութիւնը եւ ճանաչումի կոչ կ'ընէր Թուրքիոյ: Ապա խօսակցութիւնը կարգադրուեցաւ լիբանանահայ գաղութի պանապան բնագաւառներու գործունէութեան ուղղութեամբ: Դեսպան Բասիլի իր խոր համակրանքը յայտնեց հայ ժողովուրդին նկատմամբ եւ վերադառնալով իր կողմէն իրաւունքները զանապառ երկիրներու մէջ:
Հանդիպման արտաքին, պատուիրակութիւնը Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի անունով ողջոյնի գիր մը փոխանցեց ղեկավարին. Իտալիոյ խորհրդարանին կողմէ Հայկական Յեղափոխութեան ճանաչման բանաձեւին աղիթով:

ՆԱԽԱԳԱՀ ՊԱՇՏՆԱՐ ԱՍԵՏԻ ՈՐՈՇՈՒՄՈՎ

ՍՈՒՐԻՈՅ ԲԱՆՏԵՐՈՒՆ ՄԷՉ ԱՐԳԵԼԱՓԱԿՈՒԱԾ ԼԻԲԱՆԱՆՅԻ ԲՈԼՈՐ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԸ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՊԻՏԻ ՅԱՆՁՆՈՒՄ

Նախագահներ Պաշար Ասատ եւ զօր. էմիլ Լահուտ երկէ հեռաձայնային խօսակցութեան մը ընթացքին քննարկեցին չըջանալիս վիճակը:

Նախագահ Ասատ յայտնեց, թէ Սուրիա պիտի ընդունուի Սուրիոյ մէջ արգելափակուած լիբանանցի բոլոր բանտարկեալները լիբանանեան իշխանութիւններուն յանձնելու նախագահ Լահուտի փափաքին:

Նախագահ Լահուտի այս փափաքին ընդառաջելով՝ Սուրիա Լիբանանի պիտի յանձնէ թէ՛ դատական վճիռ ստացած, թէ՛ հարցաքննութեան ենթարկուող լիբանանցի բանտարկեալները, այնպէս որ անհրաժեշտ եղած է փոփոխութեան ենթարկել սուրիական որոշ օրէնքներ, կարելի դարձնելու մասնաւոր Սուրիոյ մէջ քրէական յանցանք գործած լիբանանցի բանտարկեալներու յանձնումը, Սուրիոյ մէջ ոչ մէկ լիբանանցի բանտարկեալ ձգելու մտահոգութեամբ:

Ազգային Լրատու Գործակալութիւնը հաղորդեց, որ լիբանալ բանտարկեալները քանի մը օրէն պիտի յանձնուին լիբանանեան կառավարութեան կազմած դատական-ապահովական յանձնախումբին, որ պիտի ստանձնէ զանոնք եւ պիտի ուսուցնասիրէ անոնցմէ իւրաքանչիւրին պարագայը:

Նոյն աղբիւրը նշեց, որ պետական մարմիններ արդէն սկսած են ուսումնասիրել տարբեր կողմերու ներկայացուցած անուանացանկերը, ուր երեւան եկած է, թէ բազմաթիւ անձեր Սուրիա չեն բանտարկուած: անոնց մէկ մասը անհետացած էր Լիբանանի մէջ դէպքերուն ընթացքին, զանազան պայմաններու մէջ:

365 ՕՐԵՐԷՆ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԻՆ
Սոյն ձեռնարկին հետեւեալ ազգայինները կը ստանձնեն օրուան մը ճաշի ծախսը՝ 300 տոլար: Տէր եւ տիրուհի Ռոպէր Եւ Ճէյ Մամսըլեան՝ Պարսամ Մամսըլեանի յիշատակին: Երեւան, Թիւրքմէն 260533, 260534 եւ 266822:

ՄԱՀԱԶԴ
Տիկին Զարուհի Տէր Յարութիւնեան եւ դուստրը՝ Զերա Տէր եւ տիկին Արմէն եւ Թայլին Փափազեան Տէր եւ տիկին Յարութիւն Տէր Յարութիւնեան Օրդ. Կատար Տէր Յարութիւնեան Տէր եւ տիկին Դրո Տէր Յարութիւնեան Փափազեան ընտանիք Ճէհտեան ընտանիք Փափազեան ընտանիք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, աներհօր, եղբոր եւ հարազատին՝

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԵՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ
մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 4 Դեկտեմբեր 2000ի ուշ գիշերին: Յուղարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Հինգշաբթի, 7 Դեկտեմբեր, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:
• Ներկայ ընդունիլ իբրեւ մահադ:
• Ցաւակցութիւնները պիտի ընդունուին հանգուցեալին բնակարանը, Անթիլիաս, Սիմիթեան «Անի» շէնք, Հինգշաբթի 7, Ուրբաթ 8 եւ Շաբաթ 9 Դեկտեմբերին:
• Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններ կատարել Համազգայինի ձեւաւարանի Սանտրո Ֆոնտին (Համազգայինի գրախանութ, «Շաղկոյտեան» շէնք, հեռ. 241263):

ՄԱՀԱԶԴ
Տիւր Անդրանիկ Պոյաճեան եւ զաւակները՝ Աննա եւ Աւօ
Տէր եւ տիկին Յակոբ Ոսկերիչեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին խաչիկ Պոյաճեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Ժիրայր Տիրացուեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Վահան Տեմիրճեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Յարութիւն Պոյաճեան եւ զաւակունք
Օրդ. Հայկուհի Պոյաճեան
Տէր եւ տիկին Սարգիս Պոյաճեան
Տէր եւ տիկին Նայի Պոյաճեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին տղթ՝ Անդրանիկ Տեմիրճեան եւ զաւակունք
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, մօր, քրոջ եւ հարազատին՝

ՎԱՐԴՈՒՇԻ ՊՈՅԱԾԵԱՆԻ
մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 4 Դեկտեմբեր 2000, երկուշաբթի ժամը 9:00ին, իր բնակարանին մէջ, յետ երկարատեւ հիւանդութեան:
Յուղարկաւորութիւնը կատարուեցաւ Երեքշաբթի, 5 Դեկտեմբեր 2000, կէսօրէ ետք ժամը 2:30ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:
• Ներկայ ընդունիլ իբրեւ մահադ:
• Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Անթիլիաս, Մրգեք, «Փայն Հիլ» շէնք, 4րդ յարկ, Երեքշաբթի 5, Չորեքշաբթի 6 եւ Հինգշաբթի 7 Դեկտեմբերին:
• Փոխան ծաղկեպսակ կը խնդրուի նուիրատուութիւն կատարել «Հայաստան» Համահայկական Հիմնադրամին:

ՏԵՐԵ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՅԱԶՈՂԻ ԶԱՆՈՆՔ ԼԱՒԱՊԵՍ ԳՈՐԾԱԳՐԵԼ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՐԶԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԾՐԱԳԻՐՆԵՐԸ ԿՐՆԱՆ ԱՐԴԻՒՆԱԻՏ ԸԼԼԱԼ Կ'ԸՍԵ ՊԵՐՐԻ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պրորի երկէ յայտարարեց, որ տնտեսական բնագաւառին վերաբերեալ կատարուեալ օրոշումները «յեղափոխութեան» նման արդիւնք կրնան ունենայ այս բնագաւառին վրայ, եթէ կատարուեալ օրոշումները լայնապէս գործադրել կանոնները:

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԱՀԱՄ ՊԱՏՐԻԱՐՔԸ

Նախագահ զօր. էմիլ Լահուտ երկէ Պապատայի նախագահական պալատին մէջ ընդունեց այցելութիւնը յոյն կաթողիկէներու նորընտիր պատրիարք կրեկորիոս Գ. Լահամի, որուն կ'ընկերակցուին համայնքի եպիսկոպոսները:

Նախագահ Լահուտ անգամ մը եւս շնորհաւորեց ընտրութիւնը պատրիարքին, որ իր կարգին շնորհակալութիւն յայտնեց նախագահ Լահուտի ջերմ գագուճներուն համար, որոնք արտայայտուած են թէ անգամ շնորհաւորելով, թէ նախարար Միշէլ Ֆարաքի իր անունով շնորհաւորական այցելութեամբ, թէ ալ պատրիարքի հանգիստապետած առաջին պատարագին նախագահի ներկայացուցիչ նախարար Միշէլ Մուսայի ներկայութեամբ: Հանրապետութեան նախագահը դրուատեց Լահամ պատրիարքի կեցուածքները, եւ անոր հետ քննարկեց ընդհանուր հարցերն ու զարգացումները:

ՄԱՐՈՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԸ Կ'ՈՂՋՈՒՆԷ

Մարոնի եպիսկոպոսներու խորհուրդը երկէ Մար Նասրալա Պուրթոս Սֆէյր՝ պատրիարքի գլխաւորութեամբ գումարուած իր ժողովին ետք հաղորդագրութեամբ մը ողջունեց Սուրիոյ մէջ բանտարկուած լիբանանցիները լիբանանեան իշխանութիւններու յանձնելու Սուրիոյ նախագահ Պաշար Ասատի որոշումը, մաղթելով, որ անիկա առաջին քայլը կը հանդիսանայ երկու երկիրներու յարաբերութիւններու առկայ թերութիւններու սրբազրուութեան ուղղութեամբ:

Հաղորդագրութիւնը նաեւ ողջունեց խորհրդարանի նախագահ Նեպիի Պրորիի Պեքթէի մէջ յայտարարած նախաձեռնութիւնը, որ կը վերաբերի Թաշֆի համաձայնագրի գործադրութեան, սուրիական ուժերու վերադասաւորումին, եւ ազատութիւններուն:

Մարոնի եպիսկոպոսները մտահոգութիւն յայտնեցին Լիբանանի ուղղուած խարսխեցման սպառնալիքներուն համար, եւ ընդգծեցին թշնամի օդուժի հարուածները կանխարգիլելու անհրաժեշտութիւնները: Հաղորդագրութիւնը նաեւ արձարծեց իսրայէլէն վերադարձած լահուտեան երկու տարրերու բնակիչները մէջ մահը պահանջելով յայտարարել պատճառները:

ԵՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ Է ԱՅՆԹԱՊԻ ԸԱՅՐ. ՄԻՈՒԹԵԱՆ 2001Ի ՏԱՐԵԿԱՆ ՕՐԱՑՈՅՑԸ
Ստանալու համար դիմել 01-260756, 03-307129 եւ 03-816071 քիւրդին:

ԸԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿԱՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ԼԻԲԱՆԱՆԻ ԹԵՄԻ ԿՐՈՍԱԿԱՆ ՊԱՏԻՆԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ԿԻՐԱԿԱՐԵԱՆ ԵՐՈՒՄԻ ՕՐ
Տօնակատարութիւն
Ս. ԹԱԴԵՆՈՍ ԵՒ Ս. ԲԱՐԹՈՂԻՄԵՆՈՍ ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒՆ
Շոգանաւորութեամբ՝
ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ (Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի)
Նախագահութեամբ՝
ՀՈԳԸ. Տ. ՄԱՇՏՈՅ ՎՐԻ. ԶՈՊԱՆԵԱՆԻ (Վարիչ տնօրէն կիրակօրեայ դպրոցներու)
Ուրբաթ, 8 Դեկտեմբեր 2000, երկուշաբթի ժամը 7:30ին, Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ: ԵՐԱՒԵՐ

ՄԱՀԱԶԴ
Տէր եւ տիկին Յակոբ Ճիլգորգեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Վազգէն Ճիլգորգեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին կարօ Նաշալեան եւ զաւակունք
Տիւր Գեորգ Արապեան
Տիկին Մարի Պարտազեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Սարգիս Արապեան եւ զաւակունք
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, քրոջ եւ հարազատին՝

ՄԱՀԱԶԴ
Տէր եւ տիկին Յակոբ Ճիլգորգեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Վազգէն Ճիլգորգեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին կարօ Նաշալեան եւ զաւակունք
Տիւր Գեորգ Արապեան
Տիկին Մարի Պարտազեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Սարգիս Արապեան եւ զաւակունք
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, քրոջ եւ հարազատին՝
ԱԼԻՍ ԾԻԼԳԵՈՐԳԵԱՆԻ (Ծնեալ՝ ԱՐԱՊԵԱՆ)

ՄԱՀԱԶԴ
Տէր եւ տիկին Յակոբ Ճիլգորգեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Վազգէն Ճիլգորգեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին կարօ Նաշալեան եւ զաւակունք
Տիւր Գեորգ Արապեան
Տիկին Մարի Պարտազեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Սարգիս Արապեան եւ զաւակունք
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, քրոջ եւ հարազատին՝
ԱԼԻՍ ԾԻԼԳԵՈՐԳԵԱՆԻ (Ծնեալ՝ ԱՐԱՊԵԱՆ)

Երկէ Պրորիի հետ տեսակցած երեսփոխանները յայտնեցին, որ ան ըսած է, թէ այս ծրագիրներէն առաջինն է Ընկերային Ապահովագրութեան Ազգային Սնտուկին վերաբերեալ առաջարկը: Արդարեւ, կատարուելու կը ծրագրէ ընկերութիւններու եւ հաստատութիւններու յիշեալ Սնտուկին կատարած վճարումները 38 առ հարիւրէն իջեցնել 23 առ հարիւրի:

«Այս միջոցառումները պիտի թեթեւցնեն ընկերութիւններու, հաստատութիւններու եւ գործարաններու բեռը, բայց ասոր փոխարէն կատարուելու կը պահանջեն միւսնոյն ատեն երաշխաւորել ոչ միայն Սնտուկին կողմէ աշխատանքներուն կատարած յատկացումներու մակարդակը, այլ նաեւ նոր բնագաւառներ անոնց Սնտուկի հովանիին տակ, օրինակ՝ ծխախոտի ցանքով վթարող հողագործները, ձկնորսները, գրագետները, մտաւորականները, եւ ուրիշներ», ըսաւ խորհրդարանի նախագահը:

Ան երեսփոխաններուն հետ քննարկեց գործադրութիւնը խորհրդարանին վաւերացուցած փոքր եւ միջակ չափի հաստատութիւններուն նեցուկ կանգնելու ծրագիրը: Պրորի յայտնեց, որ կատարուելու կը պատրաստէ ծրագիր մը, որ թափ պիտի անձր իր հարկաւորապէս արտադրողական ու

յատկապէս երկրագործական մարկին: «Ներկայացուած են առաջարկներ պարզացնելու համար երկրագործութեան նախարարութիւնը, ակեցնելու անոր պիտոսէն եւ հնարաւորութիւն ընձեռելու, որպէսզի յատկապէս կատարել իր դերը», ըսաւ Պրորի:

ՐԱՅԵՄ

Նախկին նախարար Ժոպէֆ Հաշէմ Պրորիի հետ տեսակցելէ ետք ըսաւ, որ բարձր կը գնահատէ եւ կը յարգէ նախկին նախարար Ֆուատ Պուրթոսը: Ան հաստատեց, որ Սուրիոյ նախագահ Պաշար Ասատի հետ իր ունեցած հանդիպումին ընթացքին իրեն վստահուած է առաքելութիւն մը, որուն օգտակար ըլլալուն համոզուելով ընդունած է ստանձնել զայն:

Հաշէմ նաեւ յայտնեց, որ խորհրդարանի նախագահին հետ քննարկած է այս առաքելութիւնը՝ նկատել տալով, որ անիկա արդէն սկսած է արդիւնատուիլ: Հաշէմ կ'ակնարկէր Սուրիոյ մէջ բանտարկուած լիբանանցիները լիբանանեան իշխանութեանց յանձնելու որոշումին:

ԳՐԱԴՈՒԱԾ ՕՐ
3 ՓԵՏՐՈՒՄ 2001, ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՅԱՆՁՆԱՍՈՒՄԲ

Կ'ՈՒՇՈՒԻ
• Երկրորդ կ'աճառուած մը համար՝ օգնական երիտասարդ մը, 15ԵՆ 25 տարեկան: Երեւան 01-487061, կտօրէ ետք ժամը 6:00էն ետք:

ԽԵՆԹ ԿՈՎՈՒ ՊԱՐԱԳԱՅ ԶԿԱՅ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՉ
Բժիշկներու սենտիքան երկէ հրապարակեց յայտարարութիւն մը, որ կը վերաբերի իենթ կովու հիւանդութեան գծով ստեղծուած մտախախտութիւններուն:
Յայտարարութիւնը կ'ըսէ.
• Մինչեւ այսօր Լիբանանի մէջ իենթ կովու հիւանդութեան ոչ մէկ պարագայ արձանագրուած է:
• Յարկ Լիբանանի մէջ VCJD հիւանդութեան ոչ մէկ պարագայ արձանագրուած է:
• Երկրագործութեան նախարարութեան կողմէ ձեռք առնուած միջոցառումները, ճիշդ կերպով գործադրուելու պարագային, բաւարար են լիբանանեան ռուկաներուն մէջ ծախուող կովու միսին որակը պահպանել:
• Կը յանձնարարուի առ ի նախապաշտօններուն ուսել միայն կովու առանց ոսկորի կարմիր միսը:
• Կովու կաթը եւ միւս արտադրութիւնները (պանիր, մածուն եւ այլն) ոչ մէկ վտանգ կը սպառնան:

ՎԱՌԵԼԱՆԵՒԹԵՐՈՒ ՆՈՐ ՍԱԿԱՅՈՅՑ

Չորի եւ ուժանիտի նախարար Մոհամէդ Ատպէլ Համիպ Պաշտունի որոշումով՝ երկէ ի գորտու դարձաւ վառելիքի տարրու հեղուկաւ սակացոյցը.
98 օրբան ղեկագինի թիթեղ՝ 14,800 լ. ոսկի
92 օրբան ղեկագինի թիթեղ՝ 14,400 լ. ոսկի
Առանց կադարի ղեկագինի թիթեղ՝ 14,700 լ. ոսկի

Քարիտի թիթեղ՝ 9900 լ. ոսկի
Մագուրի թիթեղ՝ 9700 լ. ոսկի
Պիթակագի «շիշ»՝ 10,200 լ. ոսկի:

ԱՅՆՃԱՐ ԱՅՆՃԱՐ
Ը. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ 110ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ
Ը. Յ. Դաշնակցութեան հիմնադրութեան 110ամեակին առիթով, կազմակերպութեամբ Ը. Յ. Դ. «Կարմիր Լեռ» Կոմիտի Դաստիարակչական Մարմին
Բանախօս՝
ԸԼԿ. ԳԵՂԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ (Հայաստանի Ը. Յ. Դ. Գերագոյն Մարմինի անդամ)
Շաբաթ, 9 Դեկտեմբեր 2000, երկուշաբթի ժամը 8:00ին, «Տիգրանեան» սրահին մէջ:

ԽՐԱԽՃԱՆՔ
Սասնակցութեամբ՝
ԱՐԱՐԱՏ ԱՇԱՐՈՆԵԱՆԻ ԵՒ ԻՐ ՆՈՒԱԳԱՆՈՒՄԲԻՆ
Շաբաթ, 9 Դեկտեմբեր 2000, երկուշաբթի ժամը 9:00էն սկսեալ, Այնճարի «Ս. Պողոս» եկեղեցոյ սրահին մէջ:
Ը. Յ. Դ. «ԿԱՐՄԻՐ ԼԵՌ» ԿՈՄԻՏԵ ԴԱՏԻՆԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Ազգային առաջնորդարանի կալուածոց տեսչութիւնը կը յայտնէ, թէ սկսած է ժուկի գերեզմանատան վերանորոգման եւ վերադասաւորման աշխատանքներուն: Առ այդ այն ազգայինները, որոնք գերեզման ունին ժուկի Ազգային գերեզմանատան մէջ, պարտին ներկայանալ Ս. Յարութիւն եկեղեցոյ թաղակազմութեան գրասենեակը, յստակացնելու համար իրենց պարագան:
ԱԶԳ. ՎԱՆՈՒԱԾՈՑ ՏԵՍՉՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՏԱՐՈՒՄ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԳԻ ԾՐՁԱՊՈՏՈՅՏՆԵՐ
1.- 27 Դեկտեմբեր - 1 Յունուար կիպրոս պոստներով 265 \$, ձեռք պաղով 360 \$:
2.- 29 Դեկտեմբեր 1 Յունուար կիպրոս պոստներով 245 \$, ձեռք պաղով 310 \$:
3.- 5 - 8 Յունուար - կիպրոս Ս. Ծնունդ եւ Թարախի կրգահանիկ - պարահանդէս 270 \$:
4.- 30 Դեկտեմբեր - 8 Յունուար 10 օր Հայաստան 495 \$:
5.- Քիւն (Մարտի) 29 Դեկտեմբեր - 3 Յունուար 650 \$:
6.- Իսկ Աշտուկ հաստատութիւն 30 եւ Կիպրոսի հետ գործակցութեան 25ամեակի տոնով 13 - 17 Փետրուար 265 \$:
7.- 29 Դեկտեմբեր - 2 Յունուար Գահիրէ 385 \$:

ԱՅՍ ԿԻՐԱԿԻ ԴԱՄԱԿՈՍ - ՍԵՏԱՅԱ ԵՐԹԵԿՈՎ ԵՒ ՃԱՇՈԿ 22 \$:
ՄԱՆՕՔ. Հաճեցէ՛ք 1700մեակի եւ «Հանապետական Քիւն» տարրով կանուխէն ապահովել ձեր հիւրանոցները եւ օղակալի տոնները:
Կազմակերպիչ՝ ԱՇՏԵՆ ԹՈՐՈՒՅ:
Հեռ. Ֆաքս: 01 - 261177 - 263068 - 230654
Ել. 03 - 233978

ԻՐԱՔԻ «ՔԱՐԻՒՂԻ ՓՈԽԱՐԷՆ ՄԵՆԴԱՆԻԹ» ԾՐԱԳԻՐԸ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԵՑԱԻ

ՄԱԿԻ Ապահովության խորհուրդը միաձայնությամբ որոշեց վերանորոգել Իրաքի «Քարիւղի փոխարէն սննդանիւթ» ծրագիրը, որ վեցամսեայ դրուժեամբ կը գործէ: Ծրագիրը արտոնութիւն կու տայ Իրաքի ՄԱԿԻ հսկողութեան տակ քարիւղ ծախելու, սննդեղէն, դեղ, քարիւղի մարզի համար անհրաժեշտ գոյքեր եւ այլ պէտքեր գնելու համար:

Երեքշաբթի գիշեր քուէարկուած բանաձեւին վրայ կ'աւելնար բաժին մը, որ արտոնութիւն կու տայ Իրաքի քարիւղի եկամուտին մէկ մասը յատկացնելու ժողովուրդին համար կարեւոր նկատուող այլ արտադրութիւններու գնումին, ինչպէս նաեւ քարիւղի մարզի ենթակառուցներու ու գործարաններու վերաշինութեան: Վեց ամսուան ընթացքին Իրաքը ազատութիւնը պիտի ունենայ քարիւղի վաճառքէն գոյացած գումարէն բաժին մը՝ 528 միլիոն տոլար, ազատօրէն գործածելու:

Իրաք Դեկտեմբեր 1ին ստուգուց քարիւղի արտաձուժը, որովհետեւ ՄԱԿ չընդունուց յիսուն սենթի յաւելումի պահանջին: Իրաք պահանջած էր, որ յաւելեալ գումարը ուղղակի իրեն փոխանցուի եւ ոչ թէ ՄԱԿի, որ կը հսկէ «Քարիւղի փոխարէն սննդանիւթ» ծրագրի գործադրութեան:

Ապահովութեան խորհուրդի անդամ 15 երկիրները երկար ու սուր բանավէճէ մը ետք որդեգրեցին բանաձեւը: Միացեալ Նահանգներ ու Բրիտանիա կը պնդէին, որ ծրագիրը որեւէ փոփոխութեան պէտք չէ ենթարկուի, որովհետեւ անիկ կը բաւարարէ Իրաքիներուն պահանջները: Չինաստան եւ Ռուսիա սակայն չեղտեցին, որ յիշեալ ծրագիրը պիտի չկարենայ վերջ տալ Իրաքի ժողովուրդին տառապանքին, հետեւաբար անհրաժեշտ է, որ ՄԱԿի հաստատած պատժամիջոցները վերցուին:

(ՌՈՅԹԸՐԶ)

ԱՄՍԱՆ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՅ ԴՍԵՆ ԻՍՐԱՅԷԼԱՅԻ ԴԻԱՆԱԳԷՏԻՆ ԴԷՍ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՄԱՀԱՓՈՐՁԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Յորդանան երէկ դատաւարտեց իսրայէլեան դեսպանատան մէկ պաշտօնատարին դէմ կատարուած մահափորձը, խոստանալով անպայման հետապնդել եւ դատել պատասխանատուները:

Յորդանանեան իսրայէլեան ընդդիմադրութեան շարժումը Երեքշաբթի երեկոյեան ստանձնած էր պատասխանատուութիւնը Շլոմօ Ռաքապի դէմ կատարուած գործողութեան: Ռաքապի փրկարարութեամբ Երկու շաբթուան մէջ երկրորդ անգամ ըլլալով Յորդանանի մէջ յարձակումի կ'ենթարկուի իսրայէլացի դիւանագետ մը:

Իսրայէլ, որ կը փորձէ լարուածութիւն չստեղծել Յորդանանի հետ, դատաւարտումի մեծ յայտարարութիւններ չկատարեց, սակայն սկսաւ հեռացնելու դեսպանատան պաշտօնատեղիները ընտանիքները: Դեսպանատան բանքերը ըսաւ, որ ընտանիքները Իսրայէլ մեկնած են: Ան չուզեց յայտնել մանրամասնութիւններ փոխանցել:

Արտաքին գործոց նախարարի պաշտօնակատար Շլոմօ Պէն Ամի իր կարգին ըսաւ, որ Ամմանի իշխանութիւններուն հետ ամբողջական գործակցութիւն կայ գտնելու համար պատասխանատուները:

Յորդանանի կառավարութեան կողմէ հրապարակուած յայտարարութիւնը կը նշէր, որ Ամմանի համար անընդունելի են յայտնուող արարքներ յորդանանեան հողի վրայ:

Իսրայէլեան շարժումը, որ ստանձնած էր նաեւ անցեալ ամսուան ընթացքին կատարուած յարձակումի մը պատասխանատուութիւնը, յայտարարեց, որ սինսական պետութեան գլուխացուի հրաւեր ուղղուած էր հեռանալու Յորդանանէն, սակայն ան անտեսած է պոլազացումը: Յայտարարութիւնը կը պոլազացնէ նաեւ Ամմանի կառավարութիւնը, անկէ պահանջելով, որ արտաքին Յորդանան գտնուող բոլոր իսրայէլացիները: Իսրայէլեան շարժումը կ'աւելցնէր, որ ժիհաւադ պիտի շարունակուի այնքան ատեն, որ գրաւուած կը մնան Պաղեստինն ու Աքսա մկիթը:

(ՌՈՅԹԸՐԶ)

ԻՐԱՆ ԽԱԹԵՄԻ ՍՈՒՐ ԿԵՐՊՈՎ ԲՆԱԴԱՏԵՅ ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆՆԵՐԸ

ԹԵՀՐԱՆ, 6 (ՌՈՅԹԸՐԶ) - Իրանի նախագահ Մոհամէտ խաթեմի հազարաւոր ուսանողներու ղիմաց յայտարարեց, որ բաւարար չափով իրաւասութիւն չունի իրականացնելու համար իսլամական ժողովրդավար վարչակարգ մը ունենալու իր երազը:

Պաթեմի, որ չափաւորական ու բարեկարգական կը օնաւոր մըն է, խիստ ոճով քննադատեց պահպանողականները, ղիմաց տալով, որ ի գին ամէն ինչի անոնք կ'ուզեն իշխանութեան կառուած մնալ:

Գրեթէ մէկ շաբթուան մէջ երկրորդ անգամ ըլլալով, Պաթեմի հրապարակաւ կը յայտարարէ, որ ձախողած է սահմանադրութեան կիրարկումի շխտանքին մէջ, որովհետեւ պահպանողականներ կը կաշկանդեն զինք եւ կը սահմանափակեն իրաւասութիւնները: իրաւասութիւնները չունի ըսաւ, որ իրեն վստահուած է սահմանադրութիւնը, սակայն ինք անհրաժեշտ իրաւասութիւնները չունի զայն կիրարկելու: Պաթեմի աւելցուց, որ երբ կը տեսնէ, թէ օրէնքը կը խախտուի, ինք պէտք է իրաւասութիւնը ունենայ անմիջապէս դադարեցնելու այդ խախտումը: «Դժբախտաբար սակայն այդ իրաւասութիւնը չունիմ», ըսաւ ան:

Իրանի դատական պահանջողական իշխանութիւնը Ապրիլին ի վեր փակած է բարեկարգական արեւելում ունեցող բոլոր թերթերը եւ բանտարկած



Խաթեմիի հետեւորդ մը:

լրագրողներ, մտաւորականներ ու քաղաքական անձնաւորութիւններ, զանոնք ամբաստանելով իրաւասութիւնը անարգելու յանցանքներով:

Պաթեմի չէ կրցած պաշտպանել հայածանքի ու բանտարկութեան ենթարկուող իր դաշնակիցները եւ նախընտրած է լուռ մնալ իր հակառակորդները չհրահրելու համար: Նախագահական քառամսեայ նստաշրջանի սկիզբին սակայն Պաթեմի սկսած է բարձրացնել ձայնը դատաւարտելով պահանջողականները, որոնք կը սահմանափակեն իր իրաւասութիւնները:

Իրանի նախագահը ղիմաց տուաւ նաեւ, որ ընդդիմադիր փոքրամասնութիւնը, որ պարտութեան մատնուած էր 1997ի նախագահական ու այս տարուան խորհրդարանական ընտրութիւններուն, ոչ

ժողովրդավար միջոցներու կը ղիմէ, իշխանութեան վրայ մնալու համար: Ասիկա ցոյց կու տայ, որ Իրանի մէջ ժողովրդավարութիւնը տակաւին չէ արմատացած: «Իրանցիները տակաւին պէտք է ստրկին ղերար հանդուրժել եւ փոքրամասնութիւնը պէտք է զիջի մեծամասնութեան դիմաց», աւելցուց Պաթեմի:

Ուսանողները, որոնք հաւաքուած էին Թեհրանի համալսարանի սրահին մէջ, Պաթեմիին ի նպաստ յայտարարութիւններ կատարեցին: Անոնք պարզեցրեցին իրանցիները իրաւասութիւնը, յայտարարելով, որ ան իշխանութեան վրայ պիտի մնայ երկրորդ նստաշրջանի մը համար: Պաթեմի անուղղակի կերպով ըսած էր, որ ընտրապայքար պիտի մղէ նախագահական երկրորդ նստաշրջանի մը համար:

ՌՈՒՍԻԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՏԱԽԱԶՐ ՔՆՆՈՒԹԻՒՆ ԿԸ ՊԱՀԱՆՁԷ ՔՆՆԻԶՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ ԱՆՏԵՂԻ ՈՒԺԻ ՅՈՒՅԱԴԻՐՈՒԹԵԱՆ ԴԷՊՔԻ ՄԸ ՄԱՍԻՆ

Ռուսիոյ ընդհանուր դատախազը երէկ քննութիւն պահանջած է այն հարցին շուրջ, թէ ինչո՞ւ իր քննիչներէն մէկը ղիմակաւոր գիւնեյներ օգտագործած է՝ Ռուսիոյ պատկերասփիւղի մեծածախ կայանին վրայ յարձակելու համար:

Չինեալ ոստիկաններ Երեքշաբթի օր «Օ. Ար. Թ.» պատկերասփիւղի կեդրոնատեղին խուժած են, զրաւելու համար փաստաթուղթեր, որոնք կը վերաբերին քանի մը տարի առաջ տեղի ունեցած վիտոս-ժապաւէններու ներածումներու: «Օ. Ար. Թ.» պատասխանատուները ըսած են, թէ զարմացած են ուժի աղ ցուցադրութեանէն:

Դատախազին զրասենեակը յայտնած է, որ քննիչին արդէն իսկ հրահանգուած է հարցով չզբաղի: «Օ. Ար. Թ.» պաշտօնապէս պետութեան հակաշինու ենթակայ է, սակայն մինչեւ վերջերս տիրական էր գործարար Պո-

լիս Պերեգովսքին, որ ներկայիս արտասահման կը բնակի, դատախազներու այն սպառնալիքէն ետք, թէ կրնայ ամբաստանուիլ պետական օդանաւային «Ալեքսիոս» ընկերութեան նախագահի կերպով զրամ գրպանած ըլլալու յանցանքով:

Պերեգովսքի կը հերքէ, թէ որեւէ սխալ քայլի ղիմած է: Ան կ'ըսէ, որ քաղաքական պատճառներով կը հետապնդուի: Պերեգովսքիի նման վլատիմիր Կուսինսքի Ռուսիոյ մէջ զեղծարարութեամբ ամբաստանուած է: Ան նաեւ արտասահման կը բնակի:

Կուսինսքի Ռուսիոյ լրատու անկախ աղբիւրներու միակ խմբակին՝ «Միտիա-Մուս»-ի, հիմնադիր եւ անոր բաժնետոմսերուն մեծագոյն համեմատութիւնը ունեցող անձնաւորութիւնն է:

Ան կ'ըսէ, թէ անմիջ է, եւ թէ իր ղէմ առնուած քայլերը փորձ մըն են ստի-

պելու համար իր լրատու աղբիւրները, որ Կրեմլինի ղէմ քննադատութիւններու ոճը մեղմացնեն:

«Ինթերֆաքս» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Ռուսիոյ մէջ Ինթերֆաքսի զրասենեակին պատասխանատուն՝ վլատիմիր Կորտիկնքո, յայտնած է, որ Մոսկուա պաշտօնապէս պահանջած է բոլոր անդամ երկիրներէն, որ օժանդակեն Կուսինսքիի ձերբակալման գործողութեան:

Անոր ղէմ միջազգային ձերբակալման հրամանագիր արձակուած է, որովհետեւ դատախազին կողմէ պահանջուած հարցաքննութեան չէ ներկայացած:

Համաշխարհային Հրէական Բոնկրէսը Երեքշաբթի օր յայտնած է, որ Ինթերֆաքսին կողմէ կը հետապնդէ քաղաքական եւ ոչ ոստիկանական հիմնաւորումներով:

(ՌՈՅԹԸՐԶ)

ՄԻՋՔՐՏԱԿԱՆ ԲԱԽՈՒՄՆԵՐ ՅԻՄԻՍԱՍՅԻՆ ԻՐԱՔԻ ՄԷՋ

ՔԱԿԻ ԿԻՆԵԱԿՆԵՐ շաբաթակիցին յայտնած են, թէ Իրաքի մէջ ժայլակ Թալապանիի Քիրտիստանի Հայրենասիրական Միութեան անդամ Կինեայներ հիւսիսային Իրաքի իրենց խորհուրդներուն վրայ յարձակուած են եւ 2 կողմերէն 15 Կինեայ սպանուած է:

Այս դէպքը պատահած է հալաբայի ՔԱԿԻ կողմէ Հոկտեմբերին յայտարարուած միակողմանի Կինեայի մը՝ շաբաթներու բախումներէ ետք:


Ըստ ՔԱԿԻ բարձրաստիճանի իրանաստար Օսման Օճալանի, նորագոյն բախումներուն Թալապանիի հետեւող 5000 Կինեայ մասնակցած է եւ անոնք տեղի ունեցած են իրանեան սահմանին մօտ:

Թալապանի տարակիցին թրքական իշխանութիւններուն խոստացած է, որ իր Կինեայները յաւելեալ քայլերու պիտի դիմեն Թուրքիա - Իրաք սահմանին վրայ ՔԱԿԻ Կինեայներուն դէմ պայքարելու համար:

(ՌՈՅԹԸՐԶ)

ՌՈՒՍԻԱ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐՏԵՍ Է. ՓՈՓ 20 ՏԱՐՈՒԱՆ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԵԱՆ ՎՃԻՌ ՄՏԱՅԱԻ

Ռուսական ատեան մը երէկ ամերիկեան հպատակութիւն ունեցող էստոնացի Փոփի լրտեսութեան յանցանքով ամբաստանած է եւ անոր ղէմ 20 տարուան բանտարկութեան վճիռ արձակած:



Էտմընտ Փոփ

Փոփ, որ 53 տարեկան գործարար մը եւ ամերիկեան ծովային զաղտնի սպասարկութեանց նախկին սպայ մը, հերքած է իր ղէմ ուղղուած այն ամբաստանութիւնները, թէ ռուսական թորփիլի մը մասին փորձած է զաղտնի տեղեկութիւններ ձեռք ձգել: Ան 7 օր ունի վճիռը վերատեսութեան ենթարկելու կողմէ ուղղուած համար:

Հարցը Մ. Նահանգներ - Ռուսիա յարաբերութիւնները լարած է նախագահ Պիլ Քլինթոնի իշխանութեան վերջին շաբաթներուն ընթացքին: Փոփի կիներ, որ ներկայ գտնուած է նիստին, ըսած է, թէ կող պիտի ուղղէ նախագահ վլատիմիր Փուտինին, որ Փոփին ներէ, եթէ ան յանցաւոր նկատուի:

Փոփ յայտնած է, թէ փորձած է իրենք գնել թորփիլի մասին, որ արդէն լացալստօրէն տրամադրելի եղած է: Ուաշինգթոն երէկ քննադատեց Փոփի ղէմ արձակուած վճիռը եւ կող ուղղեց Մոսկուայի, որ զայն ազատ արձակէ «մարդասիրական հիմնաւորումով»:

(ՌՈՅԹԸՐԶ)

Հ. Բ. Ը. Մ. - Հ. Ե. Ը.

ՀԱՆԴԻՊՈՒՄ - ԶՐՈՅՑ

Տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 8 Դեկտեմբեր 2000, երեկոյեան ժամը 7:30ին, Հ. Բ. Ը. Մ.ի «Տեմիրձեան» կեդրոնի մէջ. Ա. յարկ: Սոյն հանդիպումին ելոյթ պիտի ունենայ Հայաստանի Ամերիկեան Համալսարանի (Ա. Ս. Ա.) ներկայացուցիչ:

ՏԻԿԻՆ ԱՐՓԻ ԿԵՐՈՍԵՆԵԱՆ-ՊԱՆԵԱՆ (Director Of Institutional Development)

Ձրոյց հանդիպումին ընթացքին ՏԻԿԻՆ ՊԱՆԵԱՆ տեղեկութիւններ պիտի փոխանցէ A. Ս. Ա. համալսարանի ուսումնական ծրագիրներու մասին՝ յատկապէս մանրամասնելով A. Ս. Ա.ի մէջ Masters Degreeի ձեռք բերման կարելիութիւնները եւ առաւելութիւնները:

ՀՐԱԿԵՐ

Advertisement for Master All supermarket. Text: ՄԱՍԹԵՐ ԱՆԸ. ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒԹԻՆ ԵՒ ԽԹՄԱՆ ԳԻՇԵՐԸ ԶՈՒՍԱՅՈՒԹՅԷՔ ԶԵՐ ՄԵՂԱՆԸ ՕՐՈՒԹԱՆ ԱԲԱԴԱԿԱՆ ԶԱՇ՝ ՀՆԴԿԱՐԱԲՈՎ. Includes an image of a shopping basket with the text 'MASTER ALL supermarket'.

ԳՆՈՒՄԴ ԿԱՏԱՐԷ՝ ՄԻՒՓԸՐՈՒՄԱՐՔԷԹ ՄԱՍԹԵՐ ՄՈՒԼԷՆ

«ԵԹԷ ԹԻՖԼԻՍ ԶԻՉ ՄԸ ԿԱՆՈՆԱԲՈՐ ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ՈՒՆԻ, ԱՆԻԿԱ ԸԱՅԱՍՏԱՆԻ ԶԵՆՈՐԸԻ Է»

ԿԸՍԷ ԷՏՈՒՄՏ ԶԵՄՐՆԱԾԷ

Հայաստանի եւ Վրաստանի նախագահները 1 Դեկտեմբերին Միոսքի մէջ ունեցած են հանդիպում մը, որմէ ետք նախագահ Ռուսթիմ Բոչորեան նշած է, թէ այս հանդիպումները արդէն աւանդական դարձած են: Հայաստանի նախագահը տեղեկացուցած է, թէ որոշուած է յանձնարարել Հայաստանի եւ Վրաստանի կառավարութիւններուն ղեկավարներուն՝ մօտիկ ապագային հանդիպել եւ քննարկել «կուտակուած կարգ մը թեք-նիք խնդիրներ»:

Վրացի լրագրողներուն Ռուսիոյ եւ Վրաստանի միջեւ այցագրային կանոնակարգ հաստատելու մասին եղած հարցումներուն պատասխանելով՝ նախագահ Բոչորեան յայտնած է, թէ այդ հարցը կը վերաբերի Ռուսիոյ եւ Վրաստանի իշխանութիւններուն:

Վրաստանի նախագահ Էտուարտ Շեւարտնաձէ տեղեկացուցած է, որ նախագահ Բոչորեանին հետ քննարկած է շրջանային տագնապներու կարգաւորման խնդիրները: «Ես կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել Ռուսիոյ Բոչորեանին այն արկածներէն, որոնք որ, որ ցուցաբերեց Հայաստանը, երբ մենք գտնուեցանք ուժանցիկ ճգնաժամի պայմաններուն մէջ: Եթէ այսօր թիֆլիս քիչ մը կանոնաւոր ելեկտրականութեան մատակարարում ունի, ապա ատիկա Հայաստանի շնորհիւ է»: ըսած է Վրաստանի նախագահը:

ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ՎՐԱՍՏԱՆ ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ ԿԸ ՎԵՐՍԿՄԻՒ ԿԱՐՏ ԺԱՄԱՆԱԿՈՎ ՄԸ ՎՆԱՍՈՒԵԼԷ ԵՏՔ

Վրաստանի ուժանցիկ եւ ելեկտրականութեան նախարարութիւնը «Փրայմ Նիլուզ» գործակալութեան յայտնած է, թէ Հայաստանէն Վրաստան ելեկտրականութեան մատակարարումը դադարած է «Ալվերդի» ելեկտրահաղորդման գիծին վնասուելուն պատճառով:

Նախարարութեան համաձայն, երկու շաբաթ, 4 Դեկտեմբերին հայ-վրացական սահմանին մօտ տեղէ մը գնդացիով կրակ բացուած է «Ալվերդի» ելեկտրահաղորդման գիծին ուղղութեամբ, որուն միջոցով Հայաստանէն մատակարարուող 110 մեկաուտ յեկտրականութիւն կը ստանայ թիֆլիս: Կրակոցին պատճառով վնասուած է գիծին մէջ ֆազը եւ դադարած է ելեկտրականութեան մատակարարումը: Նոյն օրը «Վրացի ելեկտրահաղորդում» պետական ընկերութեան մասնագէտները սկսած են այդ գիծին վերանորոգման:

«Փրայմ Նիլուզ» կը հաղորդէ, որ 4 Դեկտեմբերին վերականգնած է Ռուսիայէն բնական կազի մատակարարումը թիֆլիսի ելեկտրականութեան ընկերութեան, որ ելեկտրականութեամբ կ'ապահովէ Վրաստանի մայրաքաղաքը:

Իր կարգին, Ռուսական կողմը կը բացատրէ, թէ կազի մատակարարումը անցեալ Ուրբաթ ընդհատուած էր Վրաստանին ունեցած մեծ պարտքին պատճառով:

Միւս կողմէ, 5 Դեկտեմբերին, Հայաստանի ուժանցիկ նախարարութիւնը յայտնեց, որ ելեկտրականութեան գիծի խզումը տեղի ունեցած էր Վրաստանի տարածքին: Վրացական կողմէն արդէն գիծը վերանորոգած է եւ ելեկտրականութեան մատակարարումը Վրաստանին՝ վերականգնած է:

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԱՍՈՅԳ ԹԻՒԸ ՅԱՅՏՆԻ ՉԷ

Հայաստանի կառավարութեան աւերթի գաղթականութեան եւ բռնազաղթածներու վարչութիւնը յայտնեց, թէ Հայաստանի մէջ գաղթականներուն ստոյգ թիւը յայտնի չէ: Այդ մէկը կրնայ ճշդուել յառաջիկայ մարդահամարին միջոցով:

Վարչութիւնը աւելցուց, որ ԱՊԶ երկիրներուն մէջ ընկերային եւ քաղաքական անկայունութեան, մասնաւորապէս դարաբաշխման տագնապի պատճառով յատկապէս 1988-1992 թուականներուն Հայաստան բռնազաղթածներուն ընդհանուր թիւը պաշտօնական տուեալներով կը կազմէ 418 հազար, որոնց 360 հազարը՝ Ազրպէյճանէն, 40 հազարը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեանէն եւ Ծաղուկեանի շրջանէն, 18 հազարը՝ Չեչենիայէն, Արխաղիայէն, Օսեթիայէն եւ այլ շրջաններէ:

Հարաբարդէն բռնազաղթածները հիմնականօրէն վերադարձած են իրենց բնակավայրերը: 60 հազարէ աւելի գաղթականներ ընկերային - տնտեսական պատճառներով ժամանակաւորապէս լքած են Հայաստանը՝ մեկնելով այլ երկիրներ, գլխաւորաբար Ռուսիա:

Վերջին՝ 1997 թուականի հաշուառման տուեալներով Հայաստանի մէջ մնացած է 313 հազար գաղթական, գլխաւորաբար՝ հայեր:

ՍԱՔՍԱՆԵՆԳՈՒՄԸ ՌԱԶՄԱՄԹԵՐԸ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՐ ՊՈՒԼԿԱՐԱՑԻ ԳՈՐԾԱՐԱՐԻ ՄԸ

«Սնարք» լրատու գործակալութիւնը կը յայտնէ, թէ անցեալ Դեկտեմբերին Հայաստանի պաշտպանութեան մարտարարութեան պաշտօնեաներու կողմէ Հայաստան-Վրաստան սահմանէ մարտանկարում հակօդային ԻԿ-17 հրթիռները սահմանուած էին հասնելու պուլկարացի գործարարի մը ձեռքը: Հայաստանի Զինուորական Դատախազութեան քննիչներն Ետուարտ Կիւլիպարեան յայտնած է, թէ յստակ չէ, թէ Ետուարտը Պուլկարային ղեկի ուր պիտի ուղղուի: Սակայն պարզուած է, որ պուլկարացի գործարարը Արթուր Մելիքեանի կանխիկ մնացած է հարկեր հաշար տղարի գումար մը: Վերջինս վնասուած գումարը պիտի ստանար ռազմամթերքին յանձնումէն ետք:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՓՈՐՁԷ ԻՐ ՏԵՂԸ ՃՆՏԵԼ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՇՏԻՆ ՄԷՋ

Հ Դեկտեմբերին տեղի ունեցաւ Ազգային Ժողովրդավարական Միութեան արտակարգ 12րդ համագումարը:

Ազգային Ժողովրդավարական Միութեան նախագահ Վազգէն Մանուկեան յայտնեց, թէ Անդրկայ հանգրուանի կուսակցութեան կարեւոր խնդիրներէն է դառնալ գարգացումը խթանող ուժ: Սակայն, ըստ անոր, կուսակցութիւնը այսօր չի կրնար սիմպլիստանանալ այդ առաքելութիւնը: Այդ պատճառով պէտք է որոշ գիշումներ ընել՝ ստեղծելու համար Անդրկայ կուսակցութիւնը մը, որուն բացակայութիւնը այսօր կը զգացուի Հայաստանի մէջ:

ԸԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՈՒՆԱՏԱՆ ՆՈՐ ԶԵՆԻ ԲԱՅՈՒՄ՝ ԱՐԺԱԹԻՆԻ ՄԷՋ

29 Նոյեմբերին Պուլճինո Այրէսի մէջ տեղի ունեցաւ արժանաւոր հարեւարներ հետաւորութեան Սեֆերեանի եւ Ատրինէ Սեֆերեան - Վարդպարոնեանի կողմէ նուիրուած՝ Հայաստանի Հանրապետութեան ղեկավարութեան նոր շէնքին բացման արարողութիւնը:

Հանդիսութեան ելոյթ ունեցած է Արժանիքի մէջ Հայաստանի ղեկավար Արա Այվազեան: Ան «Մեւրոպ Մաշտոց» շքանշաններ յանձնած է արժանաւոր հարեւարներ հետաւորութեան Սեֆերեանի եւ Արմէն Մեծատուրեանի, որոնք այս բարձր պարգևներուն արժանացած են Հայաստանի նախագահի համապատասխան հրամանագրով: Նոյն առաւել նաեւ «Հայաստան» համահայկական հիմնադրամի Արժանիքին յանձնարարութեան նախագահ հետաւորութեան համար:

Ընդունելութեան ներկայ եղած են Հայաստանի ղեկավարական անձնակազմի եւ գաղութի հայ համայնքի ներկայացուցիչներ:

Թիւրք կրող համագումարի որոշման նախագիծ մը, որուն մէջ շեշտուած է, թէ Ազգային Ժողովրդավարական Միութեան վարչութիւնը և խորհրդարանը պարտաւորուած են համակարգային փոփոխութիւններու նկատմամբ, որոնք, ըստ 11րդ համագումարի որոշումի, պէտք է ըլլային անոնց գործունէութեան հիմքը, նաեւ՝ Ազգային Ժողովրդավարական Միութիւնը վճարակաւ կը յայտնէ, վերանախագծելով ժողովրդի վստահութիւնը, արմատապէս փոխելու պարտադրուած է երկրին առաջընթացը խոչընդոտող իշխանական համակարգը:

Ըստ Ծաւարը Բոչարեանի, այս հարցին մէջ անընդունելի է միջոցի ընտրութիւնը, որ անհասկնալի վիճակի կը յանգեցնէ - կուսակցութիւնը պարտաւոր է արձանագրել՝ ինք ընդդիմադիր է, թէ իշխանութեան կազմին մէջ է, ըստ ան: Ծաւարը Բոչարեանի համար, այսօր քաղաքական գեղարվեստական անորոշութիւնը կը տիրէ, քան մը, որ ձեռնարկ է իշխանութիւններուն, քանի որ այդ պարագային դիւրին է կատարել: Իսկ Ազգային Ժողովրդավարական Միութիւնը պէտք է ըլլայ լուրջ այլընտրանք առաջադրող ընդդիմութիւնը:

ԹՈՒՐԹՄԵՆԻՍՏԱՆ ԱՐՏԱԳԱՂԹՄԸ ՀԱՅԵՐ ՄԵԾ ԴԺՈՒԱՐՈՒԹԵԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆ ԿԸ ՎԵՐԱԴԱՌՆԱՆ

Մօտաւորապէս երկու շաբաթ առաջ «Ազգ» իր «Դիւանագիտական բարձր» յօդուածին մէջ անդրադարձած էր Թուրքմենիստանի մէջ Հայաստանի դեսպանութեան յատկացում տարածքին մէջ գործող յարմարածի ճաշարանին, ըսելով, թէ դեսպանատունը ճաշարանին մէջ կը գտնուի: Օրին թերթը մեծ աղմուկ բարձրացուցած էր այդ հարցով: Յօդուածին հրապարակուելէն ետք «Ազգ» ի խմբագրութիւնը դեսպանութեան մասին արձագանք տարձգելով փաստերը եւ սխալ տեղեկութիւնները հերքելու պահանջով: Վերջերս «Ազգ» կարելիութիւնը ունեցաւ այս հարցը պարզաբանելու:

Թուրքմենիստանի մայրաքաղաք Աշխաբադի մէջ, Հայաստանի դեսպանատան կառուցման համար որոշ տարածք մը տրամադրուած է իւրիւրգիտականին եւ Տաճիկիստանի դեսպանատուններուն կողքին, սակայն կարելի չէ եղած դեսպանատունը կառուցել միջազգային պատճառներով: Այդ դատարկ տարածքներուն մէջ կը գտնուի քանոնարարական նախկին ճաշարան մը, որ արդէն դադարած է գործել: 1997ին այդտեղ դրուած էր դեսպանատան հիմնարարը, սակայն անոր վրայ ոչ մէկ բայ ւաւելցրած է. տարածքին մէջ կայ «Թուրքմենիստանի մէջ Հայաստանի դեսպանութեան տարածք» ցուցանակը:

Միօրեայ այցով Թուրքմենիստան մեկնած քանի մը լրագրողներ այցելած են «դեսպանատուն» եւ առանց հարցը մտարմնաստորէ պարզաբանելու հրապարակած են յօդուածը: Թուրքմենիստանի մէջ Հայաստանի դեսպան Ակրամ Դրիգորեան յատկացուցած է, թէ Ակաթի ունեցաւ, որ դեսպանատան որեւէ կառուց գոյութիւն չունի տակաւին, այդ ճաշարանը կ'օգտագործուի հիւրեր ընդունելու, ինչպէս նաեւ՝ Թուրքմենիստանի մէջ գտնուող կարիքատուր հայրենակիցները կերակրելու համար:

Թուրքմենիստանի մէջ Հայաստանի դեսպանը «Հայոց Աշխարհ»-ին հետ ունեցած հարցազրույցի մը ընթացքին յայտնած է, թէ արդէն որոշ միջոցով լուծուած է դեսպանատան կառուցման հարցը:

Ըստ Ծաւարը Բոչարեանի, այս հարցին մէջ անընդունելի է միջոցի ընտրութիւնը, որ անհասկնալի վիճակի կը յանգեցնէ - կուսակցութիւնը պարտաւոր է արձանագրել՝ ինք ընդդիմադիր է, թէ իշխանութեան կազմին մէջ է, ըստ ան: Ծաւարը Բոչարեանի համար, այսօր քաղաքական գեղարվեստական անորոշութիւնը կը տիրէ, քան մը, որ ձեռնարկ է իշխանութիւններուն, քանի որ այդ պարագային դիւրին է կատարել: Իսկ Ազգային Ժողովրդավարական Միութիւնը պէտք է ըլլայ լուրջ այլընտրանք առաջադրող ընդդիմութիւնը:

ԹԱՏՐՈՆ «ԱՄԵՐԻԿԱ ԿՈՒԶԵՄ, ԱՄԵՐԻԿԱ» (ԵՐԳԻԾՄԻՒՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ)

«Փորձառական Թատրոն»-ի հիմնադրման 25ամեակին առիթով Թատրոնական ներկայացում մը տեղի կ'ունենայ այս օրերուն Ե. Տէր Մելքոնեան Թատրոնային մէջ: Ներկայացումները սկսան 1 Դեկտեմբեր 2000ին ու կը շարունակուին շաբաթավերջի օրերուն:

Սեղրակ համալսարանի ստեղծագործած «Ամերիկա կ'ուզեմ, Ամերիկա» երգիծախառն Թատրոնին է, որուն նիւթը քաղուած է իրանական պատերազմին ստեղծարար Գալիլի, ղէպի Ամերիկա գաղթի տրամադրութիւններէն, Հայաստանէն ղէպի Ամերիկա հայրենաթող չարքու շփոթէն ու այս կացութեան մէջ ընտանեկան յարկերու տակ տիրող բախումներէն: Հոգեբանական վիճակներու կը միանան երիտասարդական սիրոյ հանդիպումներ, շուրջ 4օր մը մտահոգութիւնները՝ ի տես Ամերիկա երազող ու տենչացող աղջկան, որ թեթեւամիտ է, մսխող, հարուստ հօրը քսակը պարպող անմիտ որոշումներու պատճառով:

Զօհրապ Նալպանտեան յանձն առած է բեմադրել այս Թատրոնային: Ան կ'ուզէ շարունակել «Փորձառական Թատրոն»-ի աշխատանքները Ի բացակայութեան յիշեալ Թատրոնային բեմադրիչ Զօհրապ Երազուկեանի, որ հիմնադրին է «Փորձառական Թատրոն»-ին, որուն 25ամեակին նուիրուած է «Ամերիկա կ'ուզեմ, Ամերիկա» գործին բեմադրութիւնը:

Դերասանական որոշ փորձառութիւն ձեռք ձգած Զօհրապ Նալպանտեան յանդուութիւնը ունեցած է նախածեղեկութեան արտադրական շարունակներու: Հարկ է ըսել, թէ իր առաջին փորձը կարելի է նկատել գոհացուցիչ:

Ներկայացման տեղ - տեղ գաւեշտախառն ընդթիւթ ստեղծեց հաճելի մթնոլորտ՝ գոհ ձգելով հանդիսականները, որոնք լեցուցած էին սրահը կիրակի, 3 Դեկտեմբերի երեկոյան: Կուշու ու կուռ խնդուք մը, որուն միջոցով տողները եղան փորձառու կատակերգակ Փօլ Միլասեան եւ շնորհալի դերասան Թորոն Հելվաճեան, որ Հայաստանի տիպար մը մարմնաւորելով՝ յաղորդութեամբ մտաւ մորթին տակ Ամերիկա գաղթելու փորձեր կատարող Մարգարին: Իրենց համարձակ ու բնական խաղարկութեամբ հանդիս եկան երկու դերակատարներ՝ Լեւա Աճէմեան եւ Զեփիւռ Զելիկեան (այս վերջինը առաջին անգամ ըլլալով բեմ կը բարձրանար): Ներկայացման գլխաւոր տիպարներէն էր Գէորգ Նալպանտեան, որ իրրեւ վատասակ ունեցող դերակատար՝ փորձեց ընտանիքի հօր՝ Աղամեանին վիշտն ու ցատու մը արտայայտել, որոշ ճիգերով, բայց միօրինակ պոռթկումներով:

Ինչ կը վերաբերի տղթթ. Թիթեանիկեանի դերը ստանձնած Թարութ Շէքերեանի եւ Սազոյի տիպարը մարմնաւորած Զօհրապ Նալպանտեանի դերակատարումներուն, երկուքն ալ իրրեւ ամուսնութեան լիակնածուներ՝ կարողացան ձեռնադ յառաջացնել իրրեւ Ամերիկայէն եկած տկարամիտ փեսացու եւ արհեստաւոր անտաշ երիտասարդ փեսացու:

Առանց անդրադառնալու խաղարկութեան մանրամասն մեկնաբանութեան, կը բաւարարուինք յայտնելով, թէ այս Թատրոնը ընդ յայտնական «նկարագիր», ազգային դիմագիծի պահպանման համար պայքարող չարքու հոգեվիճակի դրսեւորում, հետեւաբար՝ ազգային արժէքներու պահպանման խորք, որոնք եղած են Թատրոնային տագնապները եւ նպատակակէտը: Հետեւաբար կարելի է թեթաղել բոլորին, ներկայ ըլլալու եւ հաճելի երկու ժամ գուարթ մթնոլորտ մը ապրելու:

ԹԱՏՐԱՄԵ

ԿԱՄԱՌՆԵՐՈՒՄԸ 3 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Միացեալ Ազգերու կազմակերպութեան (ՄԱԿ) ընկերային բարօրութեան բաժանմունքին նախածեղեկութիւններէն է «Կամաւոր Աշխատողներու Օրը» (3 Դեկտեմբեր): Առիթով յարմար նկատելով՝ Լիբանանահայ Օգնութեան խաչի Երջանային վարչութիւնը յարգանքի հանդիպում մը կազմակերպեց 10 ՈՒԻ Արաքսի Պուլիտեանէն» ընկերաբժշկական կեդրոնի «Թնճուկեան» սրահին մէջ: Հրահանուած էին 10 ՈՒԻ բոլոր մասնաճիւղերու վարչութիւնները եւ Երջանային վարչութեան օժանդակ յանձնախումբները: Սրահը լեցուցած ընկերակիցները գոհունակութեամբ եւ հետաքրքրութեամբ հետեւեցան այս առիթով ղառախօսելու հրահանուած Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպս. Նաչբեանին:

10 ՈՒԻ Երջանային վարչութեան ատենապետ Սեղա Ստըշեանի բացման խօսքին «Կամաւոր» բառին իմաստը բացատրող ծանօթութիւններէն ետք խօսք առաւ առաջնորդ սրբազանը, որ սպառնի բնութագրուածով եւ վերլուծումներով ներկայացուց «Կամաւոր» մարդասիրական ձգտումները, ծառայութեան ոգին, վեհանձնութիւնը:

Ազնուական ղառակարգի մարդասիրական տրամադրութիւններէն ստեղծուած է կամաւոր աշխատանքի լծուելու ՇԱՐԺՈՒԽԸ:

Իրրեւ օրինակ, ան մասնաշնչեց զուիցերիացի կամ դանիացի միսիոնարներու նուիրումը այս մարզին մէջ: Օրինակի համար՝ ձէլքըպուրն քոյրերը եւ անոնց գործակիցները, ապա անոնց ճամբուն հետեւողները՝ Բիրսթըն Վինտը եւ Նուրիները:

Կամաւոր աշխատողը սակարկութեան կամ վարձատրութեան հաշիւներէն հեռու անձն է, որ ոչ մէկ ակնկալուեան կ'ունենայ իր բարեսիրական աշխատանքին դիմաց:

Կամաւոր աշխատանքներու փայլուն ներկայացուցիչներ կարելի է նկատել Յեղասպանութեան ետք Սփիւռքով մէկ սփռուած հայ ժողովուրդին զաւակները, որոնք ամէն բանէ առաջ նուիրուեցան հիմնել

ԽՆԲԱԳՐԱԿԱՆ «ԱՍՊԱՐԷԶ» Ի

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԴԵՌ ԳՈՐԾ ՈՒՆԻ ԸՆԵԼԻՔ

Հայ ժողովուրդի ազգային ազատագրական պայքարի առաջնորդները Հայ Յեղափոխական Դաշնակցությանը այս տարի կը բուրդը իր գործունեության 110րդ տարին եւ հիմնադիր սերունդին քաղաքական մտքի արգասիքը հանդիսացող Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի վեց գաղափարը ոչ միայն կը շարունակէ խանդավառել իրարայաջորդ երիտասարդ սերունդները, այլեւ դարձած է հայրենասիրական հայրության ու սփիւռքահայ համայնքներու քաղաքական մտասեւեռման հիմնական առարկան:

Արդարեւ, ոչ համախառն բռնաստիճակները, ոչ Ցեղասպանութիւնը եւ ոչ ալ եօթանասունամեայ խորհրդային վարչակարգը կրցան հայ ժողովուրդին մէջէն արմատախիլ ընել ազատ ու անկախ ապրելու ձգտումները: Եւրոպայի անկախութեան ժամանակաշրջանին իշխանութեան անցած ապագային ուժեղը չկրցան հայ ժողովուրդը հեռացնել ամբողջ Արցախի Հայաստանի ստեղծման նախաքայլը հանդիսացող կրթային ազատագրման զինեալ շարժումը:

Փաստօրէն վերջին հարիւր տարուան հայոց պատմութիւնը, հայ ժողովուրդին ազատագրական պայքարի պատմութիւնը է: Իսկ ազատագրական պայքարին համագրունները պայմանաւորած են Դաշնակցութեան գործունեութիւնը, որ իր կարգին իր նպատակաւացուածներն ու իրապարտութեամբ դարձած է այդ պայքարին իրենական մղիչ ուժը:

Այսպէս օսմանեան ու ցարական բռնաստիճակներու օրօք Դաշնակցութիւնը հայ անհատի ու հաւաքականութեան ազատութեան դրօշակակիրը հանդիսանալով կրցաւ հայ ժողովուրդին պարզել տալ անկախ հանրապետութիւնը: Խորհրդային ժամանակաշրջանին Դաշնակցութիւնը, մնալով հաւատարիմ իր սկզբունքներուն, շարունակեց պաշտպանել անկախ Հայաստանի գաղափարը, յաճախ հեզմանքի առարկան դառնալով «յառաջդիմական» ու «հայրենասիրական» ճակատի սփիւռքեան կուսակցութիւններուն, մինչեւ որ Խորհրդային Միութեան փլուզումով հայ ժողովուրդը իր վրէժն օթափեց խորհրդային ամբողջատիրական վարչակարգի շղթաները, եւ Հայաստանը վերստին քայլ իր անկախութեան:

Նորանկախ Հայաստանի ՀՀՅԿԿԿ վարչակարգի օրերուն, երբ ապագային տարրերու հակաարցախեան գործունեութիւնը կը միտել Արցախը ենթակա դարձնել մեր դարու արքային բնահանձնիքին, Դաշնակցութիւնը բարձր պահեց ամբողջական Հայաստանի գաղափարը եւ ի գին պետական մակարակով կազմակերպուած համամերձներուն ենթակա դառնալուն պայքարեցաւ հայկական հողի ազատագրման համար:

Երկայն հանգրուանին շատերուն դարձեալ կը թուի, թէ հայ ժողովուրդին պատմութեան ամէր կանգ պիտի առնէ: Մեծաթիւ արտագաղթը յուսալքած է նոյնիսկ ամեն լաւատեսները, Հայաստանի տնտեսութիւնը ՀՀՅԿԿ քայլով քայլով ետք տակալին յարուսելու անելու նշաններ ցոյց չի տար, իսկ արցախեան հարցին ձգձգուող բանազնադիւրսները արդէն իսկ առիթ ընծայած են ապագային ուժերուն առաւելագոյն տարողութեան չբարաշահման ենթարկելու կացութիւնը, ի խնդիր կուսակցական մեղ շահերու պահովման: Աւելին. ապագային գործիչներ, ընդհուպ մինչեւ իսկ ազգային անվտանգութիւնը խնդրող առարկայ դարձնելով, Մեղրիի փոխանակման արդէն իսկ մեծթեմալ տարբերակը իբրեւ իրականութիւն կիրճ են ժողովուրդին հրահանգել տեղի տալով ոչ թէ ընդգնուելի իշխանութեան եմբարդեալ «ազգային դաւաճանութեան» դէմ, այլ ընդհանուր յուսալքութեան: Ինչ որ աւելիով կը դժուարացնէ ներկայ տագնապները յարթափարեղու հայրութեան միասնական ճիգերը:

Սա այս պայմաններուն մէջ բոլորին աչքերը դարձեալ կը յարին Դաշնակցութեան: Առանց մաս կազմելու իշխանութեան, Դաշնակցութեան ներգործող դերակատարութիւնը դրական մասնակցութիւն ունենալ երկրի քաղաքական, տնտեսական ու ընկերային բնագաւառներու բարեփոխման ուղղութեամբ, անարար կերպով Դաշնակցութիւնը կը ղնեն իշխանութիւններու դիրքերը պաշտպանողի կացութեան մէջ կամ նոյնիսկ գայն կը վերածեն իշխանութիւն կորուի: Իրականութիւնը սակայն այն է, որ Դաշնակցութիւնը առանց բաժնուելու իշխանութիւններուն ներքաղաքական գործունեութիւնը, կը փորձէ գործնապայշու մօտեցումներով գործակցել իշխանութեանց հետ: Երկիրը դուրս բերելու իր դժուարին կացութիւններէն: Պատմութեան սիրոյն պէտք է հոս արձանագրել, որ մնան մօտեցման մասին նոյնիսկ մտածելու անգամ անկարելի էր ՀՀՅԿԿԿ ապագային իշխանութիւններուն օրօք, որոնց ոչ թէ քաղաքական անփորձութիւնը ու տնտեսական արհեստագործութիւնները իշխանութիւնը դրած էին անուկ վիճակի մէջ, այլ անոնց դիտաւորեալ ապագային ու կեղծ համաշխարհային սկզբունքներու որդեգրումը հայ ժողովուրդին պարտադրած էր ոչ հոգեհարգաւ իշխանութիւն մը, որ դատապարտուած էր կործանման:

Համահայկական տարողութեամբ տակալին անլուծելի կը մնան մեր գերխնդիրներէն մեծագոյնները: Հակառակ Հայաստանի հարցերուն գոյութեան, Ջաւախք, Ափիւռք, Արեւմտեան Հայաստան չեն դարձրի Դաշնակցութեան օրակարգի նիւթերը դառնալով: Ջաւախքի հայութեան ընկերային անարդարութիւններու լուծումը եւ մշակութային կարիքներու բաւարարման գծով տարուող պայքարը միմիայն կը նպաստեն շրջանի հայութեան իր հողին կապուած մնալուն, եւ այդ ճամբուն վրայ իրար քանչիւր հայու պարտականութիւնը է օժանդակել այդ սուրը նպատակի իրագործման:

Դաշնակցութեան պարտականութիւնը է նաեւ վառ պահել Արեւմտեան Հայաստանի ազատագրման գաղափարը: Շատերուն համար մոռացութեան մատուցած, ուրիշներու պարագային իրենց յուշապատումին մէջ կորուտած թուացող Արեւմտահայաստանը անբաժան մասն է մեր պատմական հայրենիքին եւ լրացուցիչ հողային տարածքն է ամբողջական Հայաստանին:

Սփիւռքի տարածքին ցրուած հայ համայնքներու կազմակերպումը եւ անոնց պարողականութիւնը ի սպաս հայրենիքին դնելը անյետաձգելի պահանջ մը դարձած է այլեւս: Այս երկուքին փոխադարձ յարգանքի եւ համագործակցութեան պայմաններուն մէջ գոյակցութիւնը Դաշնակցութեան հիմնական տեսլականին մաս կը կազմէ: Չկայ Սփիւռք առանց Հայաստանի եւ Հայաստանը առանց Սփիւռքի չի կրնար ըլլալ այն, ինչ որ մենք հաւատարմաբար կը ցանկանք:

Իրեն հայրութեան ամենէն տարածուն ու ամենէն անելի կազմակերպուած քաղաքական մեքենան Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը մեծ գործ ունի ընելիք հայրութեան ներսօղ կազմակերպելու ու այդ ի նպաստ հայրութեան օգտագործելու առումով, որպէսզի իրականութիւնը դառնան մեր ժողովուրդին քաղաքական իտելլութիւնը, իրենց առաւելագոյն տարողութեամբ: Եւ այս իտելլը, մեր յայ րան չենք, քան Դաշնակցութեան ծրագրով առաջարկուած Ազատ, Անկախ ու Միացեալ Հայաստանի ստեղծումը:

Դաշնակցութիւնը ցարդ 110 տարի պայքարած է իրագործուած տեսելու իր նպատակներուն մէկ մասնիկը միայն: Դաշնակցութիւնը կրնա 110 տարի եւս պայքարել, որպէսզի իրականացուած տեսնէ նպատակներուն չիւր, որպէսզի իրականացուած տեսնէ նպատակներուն չիւրագործուած բաժինը Հայաստանի հողային ամբողջականութիւնը:

Կը գիտակցեց, որ դեռ շատ գործ կայ ընելիք:

ԱՂԷՏԻ ԳՕՏԻ

12 տարի է՝ Աղէտի գօտին, հսկայական (առայժմ անբուժելի) մի խոցի պէս, շարունակուած է բաց մնալ՝ ընկերային «փոսի» մէջ ընկնումու մեր երկրի այդ տարաբախտ հատումը արձանագրութեան կրկնակի «փոսում» պահելով: Սա՝ այն պարագայում, երբ անգլէն աչքով իսկ նկատելի է, որ վերջին 2-3 տարու լի Աղէտի գօտու նկատմամբ պետութեան քաղաքականութիւնը որոշակի առաջընթաց արձանագրել է:

Վկայակէցնք ընդամէնը մի տուեալ, որ «Հայոց Աշխարհ» թղթակցին տրամադրեց տարածքային կառավարման եւ քաղաքաշինութեան գործունեութիւնը համակարգող նախարարութեան շինարարական ծրագրերի վարչութեան պետ Վլասիմիր Սարդարեանը. բոլոր ֆինանսական աղբիւրների (այդ թիւում ընկերային մերդրումների հիմնադրամի, «Հայաստան» հիմնադրամի ծրագրերի, Ամերիկեան Կարմիր Խաչի միջոցների) հաշուառմամբ, Աղէտի գօտում նախատեսուած 8 միլիարտ 400 միլիոն դրամի շինարարական աշխատանքների ծախսում պետութեան մասնաբաժինն առաջին տեղում է: 2000 թվականին Աղէտի գօտում պետական պատուէրով նախատեսուած շինարարութեան ծախսը, մասնաւորապէս պետական խորհրդակցութիւնը, 5 միլիարտ 872 միլիոն դրամ էր՝ հիմնականում սեփականաշրջանործման միջոցներից գոյացած գումարների հաշուին:

Տարին դեռեւս չի արարուել, սակայն արդէն իսկ կարելի է արձանագրել, որ 2000 թուականը: Աղէտի գօտում նախորդներից տարբերում է ոչ միայն պետական պատուէրի ծախսի, այլեւ ֆինանսատրամազ կողողի համաչափութեան առումով:

Ինչը թերեւս փաստում է, որ Աղէտի գօտին ոչ թէ ձեւականօրէն (թղթի վրայ), այլ գործնականում յայտնուել է գործադիր իշխանութեան, յատկապէս Հայաստանի նախագահ Ռուպերթ Բոչարեանի ուշարողութեան կենտրոնում: Մասնագէտների կանխատեսումներով, վերականգնման այս տարուան ծրագիրը կը կատարուի ըստ սահմանուած աշխատանքային ծրագրի: Հիմնասխանի մասշտաբայնութեան առումով սա, ի հարկէ, անբարար է, սակայն նախադրեալներ է ստեղծում մեր ժամանակի ամենամակարտագրական «բացը»՝ հատուի բացը ինչ-որ չափով կրճատելու համար:

Ընդհանուր առմամբ Աղէտի գօտում մինչեւ տարեվերջ շահագործման կը յանձնուի 1710 քանկարան (նախորդ տարի այդ ցուցանիշը 764 էր), 31 դպրոց (12ը՝ ծիրակի, 18ը՝ Լոռու մարզերում), որոնց մեծ մասը արդէն իսկ գործում է, կառուցուել եւ շահագործման է յանձնուել 2 հիւանդանոց, որ ծրագրուել էր աւարտին հասցնել այս տարի: Աղէտի գօտու հասկացողութիւնից ձեռքազատուելն, անշուշտ, ինքնին քարոզ է ընկերային ճգնաժամից «ճրկում» մեր պետութեան համար, սակայն

ԼԻՒԻԹ ՊՕՐՈՍԵԱՆ

«Հայոց Աշխարհ»

ԵՐԿՐԱՇԱՐԺԵ ՏՈՒԺԱԾ ԸՆՏԱՆՔՆԵՐՈՒՆ ԿԵՍԸ Կ'ԱՊՐԻ ՏԱԿՆԵՐՈՒ ՄԷՃ

ԼՈՒԻՒ ՄԱՐԶԻՆ ՄԷՋ ԿԸ ՋՆՋՈՒԻ «ՏՆԱՅԻՆ ԳՊՐՈՑ ՀԱՄԿԱՅՈՂՈՒԹԻՒՆ»Ը

Հայաստանի 1988 թվականի Դեկտեմբերեան երկրաշարժի 12րդ տարեբարձին առթիվ Լուիւի մարզպետ Հենրիկ Քոչինեան 5 Դեկտեմբերին տուեալ մամուլի ասուլիս մը եւ ըսաւ, թէ Աղէտի գօտին մէջ կառուցուող բնակարաններու ըրաշխուէր պէտք է իրականացնել մեկնակէտ ունենալով երկրաշարժի ընթացքին բնակարանի կրկնուած ընտանիքներուն թիւը:

Ըստ Հ. Քոչինեանի, միայն անկէ ետք է, որ ընդհանրապէս կարելի պիտի ըլլայ այդ ընտանիքներուն առանձին անդամներուն բնակարանային պայմաններուն բարելաւման հարցը: Սակայն Հակառակ պարագային այդ ընտանիքներուն անդամները, աղէտեալի կարգավիճակէն օգտուելով, առանձին բնակարանի տէր դառնալու համար կը դիմեն զանազան հնարքներու, օրինակ՝ մէկ տան մէջ զգաւոր հօր Հետ չուզել բնակիլ, կիրք ձեւականօրէն կը բաժնուրի ամուսինէն եւ այլն:

Նման եղանակներով բնակարանատէր դառնալու ցանկութիւն ունեցող

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՈՒՆԻ ԱՂԷՏԻ ԳՕՏՈՒ ՎԵՐԱԿԱՆԳԻՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ ՈՒ ՀՆԱՐԱՒՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ. Յ. Դ. Գերագոյն ժողովը Կոլտնմբեր ամսին բանաձեւ ընդունեց աղէտի գօտու վերականգնողական աշխատանքներին լուրջ ուշադրութիւն դարձնելու վերաբերել: Աղէտի գօտու վերացման պետութեան համար այլեւս անյետաձգելի խնդիր մասին մեր հարցերին պատասխանում է Հ. Յ. Դ. Ազգային ժողովի խմբակցութեան անդամ, Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմնի Գերակայացուցի Արմէն Ռուստամեանը:

ՀԱՐՑՈՒՄ. - Աղէտի գօտու վերականգնման անընթաց քայլերը, ընկերային-տնտեսական խնդիր լինելուց գաւտ, վաղուց նկատմամբ առաջ է կանգնեցրել նաեւ մեր պետութեան քարոյսագրութեան մթնոլորտը. այս խնտով ի նից որոշակի ծրագրեր է ձեռնարկում Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը:

ՊԱՏԱՍԽԱՆ. - Դաշնակցութիւնը միշտ ուշադրութեան կենտրոնում է պահել աղէտի գօտու վերականգնման խնդիրները: Մենք աղէտի գօտու անյապաղ վերականգնումը հապէս կապում ենք մեր երկրի, պետականութեան կայացման, յոյսի, հաւատքի վերականգնման հետ: Եւ բնական է, որ մեր մտտեղծումները իրականացնելու համար փորձելու ենք լայնորէն օգտագործել Դաշնակցութեան բոլոր հնարաւորութիւնները եւ խորհրդարանում, որովհետեւ կան օրէնսդրական դաշտի հետ կապուած խնդիրներ, եւ անմիջականօրէն աղէտի գօտու վերականգնման աշխատանքներին մասնակցելով: Արդէն 12 տարի ժողովուրդը տառապում է աղէտի պատճառով վնասներէր, եւ դեռ չեն իրականացուել անհրաժեշտ ծաւալի աշխատանքներ: Հանրապետութեան շուրջ 40 տոկոսն ընդգրկուած է աղէտի գօտու մէջ, եւ այսօր արդէն վերականգնումը ոչ միայն մեր բոլորի պատուի հարցն է, այլեւ մեր պետութեան հեռանկարի հանդէպ հաւատի վերահաստատման կարեւորագոյն նախապայմանը: Կարծում եմ, որ հաւատի վերականգնումը պէտք է կատարուի աղէտի գօտու վերականգնումով. եթէ օրկանիզմը որեւէ հիւանդ օճախ ունի, այդ վնասուած օրկանը բժշկելով է ցոյց տալիս, թէ որքան ամուր եւ ուժեղ է օրկանիզմը:

Դաշնակցութիւնն ունի աղէտի գօտու վերականգնման աշխատանքներին մասնակցութեան ծրագրեր ու հնարաւորութիւններ: Շիրակի գօտում ունենք փոխմարզպետ, Շիրակի մարզային կառույցը նոյնպէս ամբողջութեամբ լծուած է հէնց այդ խնդիրներին լուծմանը:

Հ. Ի՞նչ մասնաւոր ձեռնարկներ է նախատեսում Դաշնակցութիւնը:

Պ. - Նպատակ ունենք շատ լուրջ օգտագործել Դաշնակցութեան ոչ միայն ներսի՝ Հայաստանեան կառույցի ունեցած հնարաւորութիւնները, այլեւ պատրաստ ենք շատ աւելի լուրջ ու խոր մասնակցութիւն ունենալ գօրաշարժի ենթակրկելով մեր համապիւս կառույցի հնարաւորութիւնները, որպէսզի խթանուեն ներդրումները աշխատանքի ստեղծելու եւ կրթամշակութային ծրագրերում: Այսպիսի գործեր արուել են մեր, ինչպէս նաեւ՝ Հայ Օգնութեան Միութեան կողմից, որը յայտնի է իր իրականացրած բազմաթիւ ձեռնարկներով, եւ շարունակում է գործունէութիւնը: ՀՕՍը աղէտի գօտում հսկայական առողջապահական համալիր է կառուցել, կրթական ոլորտում լուրջ աշխատանքներ է կատարել: Սակայն այս ամէնին մեծ թափ է պէտք հաղորդել, որովհետեւ աղէտի գօտու վերականգնումը արդէն մեր պետութեան հեռանկարն է պայմանագրուած, որովհետեւ անվերջ ձգելով, նոյն խնդիրները մասին երկար խօսելով՝ կարող են մարդկանց վերջին յոյսերն էլ մարել:

Հ. - Շատ է սաւում, որ աղէտի գօտու վերականգնմանը պետական համալիր մօտեցում է պէտք: Ի՞նչ է դա նշանակում:

Պ. - Ազգային ժողովում արդէն իսկ քննարկուել եւ մեր խմբակցութեան գործօն մասնակցութեամբ ընդունուել է «Աղէտի գօտու վերականգնման մասին» օրէնքը, որը յստակեցնում է աղէտի գօտու վերականգնման պետական քաղաքականութեան մշակման հիմնական սկզբունքները. ծրագրային բոլոր հիմունքները կարգաւորուած են այդ օրէնքով: Օրէնքում յստակ ասուում է, որ աղէտի գօտու վերականգնման համալիր ծրագիրը պէտք է կազմուի կառավարութեան եւ հաստատուի Ազգային ժողովի կողմից: Այդ պիտի ծրագրի կայ, կառավարութիւնն ընդունել է 1998 թվականին, սակայն ծրագրին նոր թափ է պէտք հաղորդել, յստակեցնում ենք ճշդումներ կատարել: Մեր խմբակցութեան ջանքերով այս օրինագծում ներառուեց առանձին մի յօդուած, որով 1997 թվականին Յուլիսի 17ի Նոյեմբերեան տեղի ունեցած երկրաշարժի հետեւանքները վերացման շինարարավերականգնողական աշխատանքները նոյնպէս ներգրաւուեցան այս համալիր ծրագրում: Այսուհետեւ Նոյեմբերեանի շրջանի մի քանի բնակավայրեր իրտուելու են որպէս աղէտի գօտի: Պետութեան, իշխանութիւնների առաջ իսկապէս բաւականին լուրջ խնդիրներ կան:

Մենք կարծում ենք, որ բնակարանային ապահովւածութեան խնդրի լուծման նպատակով պետութիւնը պէտք է ընդլայնի շինարարութեան ծաւալը, բայց, միեւնոյն ժամանակ, երկարաժամկէտ վարկերի, պետական պարտատուերի միջոցով պէտք է խթանի անհատական բնակարանային շինարարութիւնը. մարդիկ պէտք է կարողանան իրենք կառուցել իրենց բնակարանները:

Այս խնտով, ի հարկէ, պէտք է վճարական, հետեւողական միջոցներ ձեռնարկուեն՝ բացառելու համար, դժբախտարար, արդէն օրինաչափութիւնը դարձած կառավարութեան թիւները:

Հ. - Իլի որքա՞ն մամուակ կը պահանջուի, որպէսզի աղէտի գօտին վերականգնուի համալիր ծրագրերով:

Պ. - Խոստումներ կան, որ աղէտի գօտին ամբողջութեամբ կը վերականգնուի արդէն 2002-2003 թվականին:

«ԵՐԿՐ» էջ 6

Հիբանանեան Մամուլ

ՊԵՐՔԵԻ ՈՒԴԴՈՒԹԵԱՍԲ ԵՄԻՍԻՆՈՒԹԻՒՆԸ՝ ԲԱՂԱՔԱԿԱՆ

ԵՐԿՈՒ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՆ ԻՆՏԵՐՆԵՏԻ ԵՐԿԻՍՕՍՈՒԹԻՒՆԸ՝ ԻՐԱԳՈՐԾԵԼԻ

Քաղաքական նախաձեռնություններու միջոցով, անոնց նկատմամբ որդեգրուած կեցուածքները եւ զանոնք շրջանցելու ունենալ փորձերը կը մնան իրենց կարեւորությունները մակարդակին վրայ, մասնաւորապէս որ այդ նախաձեռնությունները իրական եւ համարձակ երկխոսութեան մը դռները կը բանան լիբանանեան բոլոր դեկափարուներէն հետ՝ համաձայն Սուրիոյ նախագահ Գոր. Պաշչար Ասատի բոլորին բացուելու սկզբունքին, պայմանաւ որ երկու երկիրներուն միջեւ գոյութիւն ունեցող հարցերուն զծով որոշման կայացումը մնայ իւրաքանչիւր երկրի պատկան հաստատութիւններուն:

Ներկայիս տեղի ունեցող շարժումներուն, հաղորդակցութեան խողովակներուն, ինչպէս նաեւ Պէյրուսի - Դամասկոս ճամբուն վրայ գոյութիւն ունեցող շարժումին լաւատեղեակ քաղաքական աղբիւրները կը յատնեն, թէ ներկայ հանգրուանը կը պարտադրէ սուրիական մայրաքաղաքի այցելուներուն «որակը»:

Այժմ պատասխանատուներուն հետ խօսակցութիւնը կը կեդրոնանայ ազգային խորք ունեցող հարցերու եւ Պէյրուսի ու Դամասկոսի միջեւ յարաբերութիւններուն շուրջ, հակառակ անցեալի այցելութիւններուն, երբ այցելուները, իրենց տարբերութիւններով հանդերձ, Դամասկոս կը դիմէին նախարար կամ երեսփոխան ըլլալու կամ յաճախ «անձնական ծառայութեան» մը համար, որուն առանցքը կ'ըլլար օգնութիւնը՝ նախարարութեան մը կամ տնօրէնութեան մը մէջ պաշտօն վերցնելու աշխուհ կամ այնիչ հաւատարմ մարդուն համար:

Յաճախ այս պահանջը էր անցնէր շորտերը կարգի պաշտօնեայ ըլլալու համար դիմումը, որովհետեւ անկէ մեծ եղող պահանջները աւելի մեծ էին այցելուներէն: Ասիական Լիբանանի եւ Սուրիոյ միջեւ անձնական, ոչ ռազմավարական յարաբերութիւնները երբեմն կը դնէին պահանջելու մակարդակին վրայ՝ կարգ մը լիբանանցիներու համար:

Իսկ ռազմավարական յարաբերութիւնը եւ այն, ինչ որ կը դրուի նոյն ծիրին մէջ, այսինքն՝ Լիբանանի մէջ սուրիական բանակի ներկայութիւնը, անհրաժեշտ, օրինական եւ ժամանակաւոր ներկայութիւն է, ինչպէս որ նախագահ Գոր. էմիլ Լահուտ, վարչապետ Ռաֆիք Հարիրի եւ խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի կ'ըսեն հրապարակաւ:

Այս յարաբերութիւնը կ'ենթադրէ, ռազմավարական

երկխոսութիւն, որ երկու պետութիւններուն շահերուն համար անհրաժեշտ պիտի ըլլայ մօտիկ եւ հեռուոր ապագային:

Ներկայիս ներքին քաղաքականութեան եւ նոյնիսկ շրջանային կացութեան հետ ուղղակի թէ անուղղակի կերպով կապ ունեցող պայմանները փոխուած են թէ՛ լիբանանեան, թէ՛ սուրիական հասկացողութեան մը: Հետեւաբար ասիական կ'ենթադրէ այս յարաբերութիւնը տեղադրել իր ռազմավարական մակարդակին վրայ: Ասիական սկսած էր իրականացնել նախագահ Լահուտ իր իշխանութեան գլուխ գալէն ի վեր:

Ասոր համար ալ աղբիւրները կ'աւելցնեն, որ դերերուն մասին խօսքը եւ ուժերուն ու հեղինակութիւններուն յայտնարբումը՝ որ իր քաղաքական «չահերուն համար կը քաղէ», այս ծիրին մէջ տեղի ունենալիք որեւէ քաղաքական փոփոխութեան արդեւնքը, չեն արտացոլելու գոյութիւն ունեցող իրականութեան խորքը, նկատի առնելով, որ լիբանանեան կառավարութիւնը՝ իր բնական հարցին շուրջ ուրիշ երկրի մը հետ գործ ունեցող պետութիւն, չի կրնար չհետեւիլ սահմանադրական եւ օրինական ճամբաներուն, մասնաւորապէս իր համաձայնագիրը, որուն տակաւին բոլորն ալ կառչած կը մնան, յստակօրէն կը մատնանչէ որոշումի «վայր»ը, որոշումը, որ կը տրուի լիբանանեան իշխանութիւններուն կողմէ, եւ այն խողովակները, որոնցմէ պէտք է անցնի նախքան գործադրութեան ղրուիլը:

Ասկէ մեկնելով՝ աղբիւրները կը բացայայտեն, որ Պէրրիի եւ Դամասկոսի միջեւ երկխոսութեան դրան բացման ձեւին շուրջ արտայայտուած «ընդդիմադիր» կեցուածքները պիտի չարգելակեն երկխոսութեան գործընթացը, այլ պատճառ պիտի հանդիսանան, որ այդ գործընթացը պարունակէ իր ճամբան՝ հեռու մնալով աղմկարարութենէն, որ ընկերացաւ վերջին օրերուն տեղի ունեցած իրադարձութիւններուն:

Այդ գործընթացը պիտի շարունակուի հանդարտ կերպով, որովհետեւ նպատակը Լիբանանի եւ Սուրիոյ շահերը նկատի առնող քայլերու զծով փոխհասկացողութեան հասնելն է՝ մեկնելով յարաբերութիւններու իւրայատկութիւնները պահպանելու նախաձեռնողութեանէն, նոյնիսկ թէ տրուելիք որոշումը ենթակայ պիտի ըլլայ ժամանակացոյցի մը:

ԱՍԻՊ ԱՊԻ ԱԸԼ

«Անուար»

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԹԱՏԵՐԱՐԵՄ

ԵՐԿԻՍՕՍՈՒԹԵԱՆ ԿԱԽԱՐԴԱՆՔԸ

Լիբանանի մէջ սուրիական զինուորական ներկայութիւնը մերժող քաղաքական բառապաշարին մեղմացման կողմ շրջանային այս ճգնաժամային կացութեան մէջ կը կազմէ հասարակաց դիմ մը այն բոլորին մօտ, որոնք Պէյրուսի կու գան Սուրիոյ նախագահ Պաշչար Ասատի հետ հանդիպումէն ետք:

Անորմէ ունենք Դամասկոս երթալէ առաջ մարդը ընդին համաձայն էին մարտիներու պատրիարք Սֆէյրի եւ մարտի եպիսկոպոսներու կողմէ այս հարցին արձարման, որ լիբանանցիները երկու մասի բաժնեցանոնցմէ իւրաքանչիւրը միւսը կ'ամբաստանէ վտանգաւոր ամբաստանութիւններով, որոնք կը տարուրբին գործակալ ըլլալու եւ դաւաճանութեան միջեւ:

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիի Պէրրիի պատրիարքարան այցելութենէն ի վեր իրարու յարողած իրադարձութիւնները հիմք կը ծառայեն փաստելու, որ Լիբանանի մէջ սուրիական ներկայութիւնը առկա հարց մը չէ լիբանանցիներու հատուածի մը Սուրիոյ հանդէպ կեցուածքի թղթածարին մէջ, որքան որ արտայայտութիւնն է Սուրիոյ դաշնակից լիբանանեան իշխանութիւններուն եւ լիբանանեան հատուածի մը միջեւ վատթարացած յարաբերութիւններուն:

Եւ թէ՛ ուշադրութիւն կը գրաւէ այն երեւոյթը, որ

Սուրիայէն վերադարձող իւրաքանչիւր քաղաքական գործիչի վրայ կը թուի իջած ըլլալ համախոսութեան շնորհքը, ապա անիկա կը մղէ խորապէս մտածելու երկխոսութեան ձեւը որդեգրելու դրական ազդեցութեան վրայ: Ընդ մը, որ կ'ենթադրէ քննարկման սեղանին վրայ դնել իրականութիւնները, մտահոգութիւնները, ինչպէս նաեւ՝ իրողութիւններն ու մտավախութիւնները, մինչդեռ փաստուեցաւ, որ «ըսելիքը ըսէ եւ նստէ» սկզբունքին որդեգրումը կրնայ աւելցնել բարդութիւնները, տարակարծութիւնները, բաժանումները եւ ամբաստանութիւնները:

Եթէ ճիշդ է, որ Լիբանանի մէջ Սուրիոյ եւ Սուրիոյ մէջ Լիբանանի առնչուող որեւէ նիւթ պէտք է քննարկուի իւրաքանչիւր երկրի պաշտօնական պատկան հաստատութիւններու մակարդակով, այն սկզբունքով, որ յարգուի Լիբանանի մէջ անկախ պետութեան սկզբունքը, ապա ճիշդ է նաեւ, որ այս սկզբունքը կրնայ անհետանալ, եթէ լիբանանեան իշխանութիւնները երկխոսութեան չսկսին բողոքող հատուածին հետ:

Երկխոսութիւնը ինքնըստինքեան գոյութիւն ունեցող դպրոց մըն է, եւ ով որ լաւ կերպով կը կիրարկէ գայն, կրնայ փրկել ազգեր եւ ժողովուրդներ եւ կը բարձրացուի աստուածներու մակարդակին:

Երկխոսութիւնը չ'ենթադրէ ենթարկուածութիւն, այլ՝ համաձայնութիւն տարբեր կարծիքներու միջեւ, բացայայտում՝ միտումներու, ընդառաջում՝ կարելիին եւ համաձայնութիւն՝ արգելքներու շուրջ:

Երկխոսութեան վարդապետութիւնը կ'ըսէ, թէ իշխանութեան տէր անձը կը դիմէ այս միջոցին, երբ բողոք մը կը լսուի ոեւէ մէկուն կողմէ:

Երկխոսութիւնը լիբանանեան սահմանադրական անախորհեան մէջ պատասխանատուութիւնն է հանրապետութեան նախագահին, որ պարտի ի գործ դնել անկարելին պահպանելու համար «Լիբանանի անկախութիւնը, միասնութիւնը եւ հողերուն ամբողջականութիւնը» (սահմանադրութեան 43րդ յօդուած):

Նախագահ էմիլ Լահուտ ունի սկզբունքային յայտնի կեցուածքներ, սակայն այդ սկզբունքները կեանքի վերածելը, Լիբանանի պէս երկրի մը մէջ մեծ ճիգի կարիք ունին: Իշխանութեանց հեղինակութիւնը ներկայիս այն է, ինչ որ էր թագաւորներու եւ իշխաններու ժամանակաշրջանին:

Գոյութիւն ունին բողոք եւ իշխանութիւններ... Բողոքը լուծումի պէտք ունի...

Լուծումը ընդառաջել չի նշանակեր, այլ երկխոսութիւն... երկխոսութեան հրապարակը ճառարտութիւնը չէ, այլ ժողովարարական:

Ժողովարարականը ոչ մէկ օգուտ կ'ունենան, եթէ իրենց մէջ հաւաքեն համամիտներ: Իսկ հակառակորդները չեն հանդիպիր բացի նախաձեռնութեամբ:

Ուրեմն նախաձեռնութիւն կը պահանջուի:

«Սաֆիր»

ՖԱՐԵՍ ԽԱՃԵԱՆ

«ՏԻԱՐ»-Ի ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՅԱԶՈՂՈՒԹԵՆԷՆ ԵՏՔ, ՀԱՐԻՐԻ 2001ԻՆ ՊԻՏԻ ԱՅՅԵԼԷ ԱԻՍՏՐԱԼԻԱ

Վարչապետ Ռաֆիք Յարիրի կը մտածէ յառաջիկայ տարի այցելել Աւստրալիա, վերջինիս կառավարութեան հետ կնքելու համար տնտեսական համաձայնագիրներ, որոնք լիբանանեան կառավարութեան կարելիութիւն կու տան ամրապնդելու քաղաքական եւ տնտեսական յարաբերութիւնները այս ընդարձակ ցածաքաճապի հետ, որ մէկ կողմէ ունի անգնահատելի բնական հարստութիւններ, իսկ միւս կողմէ շատ արդիական եւ զարգացած արհեստագիտութիւն մը...

Վարչապետը կը նախատեսէր դէպի Աւստրալիա այս այցելութիւնը կատարել չորս տարի առաջ, այսինքն՝ նախքան իր հեռանալը վարչապետութենէն, մերկայ նախագահ էմիլ Լահուտի իշխանութեան սկիզբը:

Եւ իրօք, վարչապետ Յարիրի պատրաստուած էր այս պաշտօնական այցելութեան եւ ողջունած էր Աւստրալիոյ կառավարութեան վարչապետին իրեն ուղղուած հրավերը, սակայն ատենին տեղեկացած էր իր մտադրութենէն տեղի ունեցած իշխանափոխութեան պատճառով:

Տարակոյս չկայ, որ այս մակարդակով լիբանանեան պատուիրակութեան մը այցելութիւնը այս մեծ պետութեան, որ տեւաբար կեցած է Լիբանանի կողքին, կը նկատուի վարչապետի խաղ մը այս զգայուն պայմաններուն մէջ, երբ Լիբանան կարիք ունի միջազգային բարեկամութիւններու:

Այսպիսի միջազգային յարաբերութիւններ կ'օգնեն Լիբանանի, որպէսզի դիմազուտ տնտեսական, դրամական եւ ժողովրդային տագնապները, մասնաւորապէս լիբանանցիները կը գտնուի լիբանանեան գաղութ մը, որ կառչած կը մնայ իր հայրենի երկրին, անհոգութիւններուն եւ սուրիական ներկայութեան հետ:

Սակայն միջազգային շուկաներուն դիմաց այս բաց քաղաքականութեան շարունակութիւնը կ'ենթադրէ լիբանանեան պետութեան շրջանցելու լայնցնելու ուղղութեամբ, մասնաւորապէս իր կիրճերուն հետ, ուր գոյութիւն ունին լիբանանեան մեծ գաղութներ, կրճան աշխատելու նոր առիթներ ապահովել համալսարանները շրջանաւարտ երիտասարդներուն համար:

Եւ որովհետեւ Աւստրալիա անցեալին վարժուած էր Լիբանանէն ընդունիլ պատուիրակութիւններ, որոնք յաճախ քաղաքական եւ կուսակցական բնոյթ կը կրէին, ապա այս անգամ Աւստրալիայի լիբանանցիներէն լսեցին նոր լեզու մը, որ ուղղակիորէն կ'առնուի երկրի տնտեսութեան, ընկերային կեանքի եւ իշխանութեան ու կառավարութեան օգնութեան շրջանցելու համար տնտեսական տագնապը:

Սակայն միջազգային շուկաներուն դիմաց այս բաց քաղաքականութեան շարունակութիւնը կ'ենթադրէ լիբանանեան պետութեան շրջանցելու լայնցնելու ուղղութեամբ, մասնաւորապէս իր կիրճերուն հետ, ուր գոյութիւն ունին լիբանանեան մեծ գաղութներ, կրճան աշխատելու նոր առիթներ ապահովել համալսարանները շրջանաւարտ երիտասարդներուն համար:

Մատուիրակութիւնը Աւստրալիոյ արտաքին տնտեսական քաղաքականութեան եւ տնտեսական շրջանակներու հետ բանակցութիւններու ընթացքին յաջողեցաւ Աւստրալիական կողմը համոզել Լիբանանի հետ համագործակցելու կարելութեան մէջ, մասնաւորապէս քաղաքական, տնտեսական եւ արհեստագիտութեան միջոցով:

Լիբանանեան եւ Աւստրալիական կողմը

մերը համաձայնեցան Պէյրուսի մէջ բանալու միջազգային ցուցասրահ մը Աւստրալիական արհեստագիտական եւ ճարտարարուեստական արտադրութեան համար, ցուցասրահ մը, որուն մասնակցին տարբեր Աւստրալիական հաստատութիւններ:

Ասոր դիմաց անոնք համաձայնեցան նաեւ Աւստրալիոյ մէջ բանալու լիբանանեան ցուցահանդէս մը, որ իր կարգին ընդգրկէ լիբանանեան արդիակառուցական, մշակութային, առեւտրական եւ գիւղատնտեսական արտադրութիւններ:

ժաբ Սարրաֆի լիբանանեան գաղութին առաջարկեց ստեղծումը լիբանանեան խառն ընկերութեան մը, որուն մէջ լիբանանցի գործարարները մերկայացնեն լիբանանեան սեփական մարզը, իսկ այդ գործարարներուն կողքին գտնուին նաեւ լիբանանեան ծագումով Աւստրալիացի գործարարներ, բոլորն ալ պէտք է նպատակն ունենան լիբանանեան դրամազուլուի գոյացման, իսկ ընկերութեան առաջնութիւնը ըլլայ ձեռնարկել լիբանանեան եւ Աւստրալիական արտադրութիւններուն համար շուկայ գտնելու երկու երկիրներուն մէջ:

Միւս կողմէ, յառաջիկայ տարուան առաջին կեսին Աւստրալիական տնտեսական պատուիրակութիւնը մը պատասխան այցելութիւնը պիտի տայ լիբանան շարունակելու համար յաջող բանակցութիւնները, որոնք տեղի ունեցան Սիտնիի եւ Մելբուռնի մէջ, վերջին օրերուն:

Լիբանանեան տնտեսական մարզի յաջողութիւնը եւ Լիբանանի աշխատանքը մեծ երկիրներուն հետ գոյութիւն ունեցող յարաբերութեան շրջափոխ լայնցնելու ուղղութեամբ, մասնաւորապէս իր կիրճերուն հետ, ուր գոյութիւն ունին լիբանանեան մեծ գաղութներ, կրճան աշխատելու նոր առիթներ ապահովել համալսարանները շրջանաւարտ երիտասարդներուն համար:

Եւ որովհետեւ Աւստրալիա անցեալին վարժուած էր Լիբանանէն ընդունիլ պատուիրակութիւններ, որոնք յաճախ քաղաքական եւ կուսակցական բնոյթ կը կրէին, ապա այս անգամ Աւստրալիայի լիբանանցիներէն լսեցին նոր լեզու մը, որ ուղղակիորէն կ'առնուի երկրի տնտեսութեան, ընկերային կեանքի եւ իշխանութեան ու կառավարութեան օգնութեան շրջանցելու համար տնտեսական տագնապը:

Սակայն միջազգային շուկաներուն դիմաց այս բաց քաղաքականութեան շարունակութիւնը կ'ենթադրէ լիբանանեան պետութեան շրջանցելու լայնցնելու ուղղութեամբ, մասնաւորապէս իր կիրճերուն հետ, ուր գոյութիւն ունին լիբանանեան մեծ գաղութներ, կրճան աշխատելու նոր առիթներ ապահովել համալսարանները շրջանաւարտ երիտասարդներուն համար:

«ՏԻԱՐ»
Սիտնի

ժՈՐԺ ՊԵՇԻՐ

Պատրաստեց՝ Ժ. 3.



GAS G. Ayanian & Sons
Dora, Tel: 255222/3/4/5/6 Cellular: (03) 627728/9
Gemayzeh, Tel: 447000 - 445429, Fax: (01) 265187 - 582357

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆՆ ՈՒՆԻ ԱՂԵՏԻ ԳՕՏՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ...

Ծարուակաւորած 5րդ էջին

ներին, սակայն, անկեղծ ասած, դեռեւս խորհրդային տարիներէն սկսած՝ այդպիսի խոստումներ չատ են եղել, որոնք տարբեր պատճառներով յետաձգուել են, եւ ժողովուրդը կորցրել է հաւատը: Քանի դեռ չկան իրական աշխատանքներ ու արդիւնքներ, ժամկէտներ նշելը ոչ մէկի համար հիմք չի կարող լինել:

Հ.- Աղէտի գօտին դարձաւ բարեփոխութեան էփիկենտրոնը, Հայաստանը յայտնուելու արդէն աշխարհի ուշադրութեան կենտրոնում, սակայն չդարձաւ, արդեօք, դա մեր ժողովուրդի՝ օգնութիւններին հաշուին ապրող եւ օգնութեան սպասող մի հսկայական հատուածի ի յայտ գալու պատկանը:

Պ.- Այո, դժբախտաբար, օգնութիւնները, որ ուղարկուեցին աղէտի գօտի, փոխանակ ծառայէին իրենց զրական նպատակին, առաջ բերեցին նաեւ այդ բացասական երեւոյթը: Մեր ժողովուրդը ինչ-որ առումով սպասողի հոգեբանութիւն ձեռք բերեց: 12 տարիներ ընթացքում կարծրացած այդ երեւոյթի դէմն առնելու միակ ճանապարհը վերջապէս աղէտի գօտին վերացնելն է: Պէտք է ստեղծուի հնարաւորութիւն, որ մարդիկ իրենց աշխատանքով, սեփական քրտինքով կարողանան պահել իրենց ընտանիքը եւ մտանան, օգնութիւններին հաշուին ապրելու մասին: Եթէ փողոցներում մոռացականներ կան, այո, այդ հոգեբանութեան հետեւանքն է:

«Սաֆիր»

Կնոջական

ՄԵՆԴԱԳԻՏԱԿԱՆ

ՃԻՇԴ ԵՒ ՄԽԱԼ ԿԱՐԾԻՔՆԵՐ ՏՈՒՐՄԻՆ ՄԱՍԻՆ

Յատկապես տոնական օրերուն անկարելի է դանց առնել տուրմը: Որոշուածները, որ անոր հանդէպ բոլոր ալ տկարութիւն ունինք եւ, միջին հաշուով, անձ մը տարեկան 7 քիլո տուրմ կը սպառէ:

Անշուշտ որ այս համեղ ուտելիքը իւր եւ շաքար կը պարունակէ, բայց նաեւ մեր առողջութեան նպաստող սնունդներ ալ կը հայտնաբերուին մեզի...

- 1 - ԲՈՒՆՈՐ ՏՈՒՐՄԵՐՆ ԸՆԴՆԱԿԱՆ ԵՒ ԱՐԺԵՐ ՈՒՆԻՆ:

ՃԻՇԴ եւ ՄԽԱԼ. սննդական գետնի վրայ անոնք գրեթէ համարժէք են, բայց համը կրնայ տարբերիլ: Այսպէս, Փղոսկրային Ափունքի քաբառն նոյն համը չունենանք, ինչ որ կ'ունենայ ինտոննեգիոյ կամ Հարաւային Ամերիկային: Ասոնցմէ իւրաքանչիւրը ունի իր յատկանշական համն ու բոյրը, որ մեծապէս կ'ազդէ տուրմին որակին:

- 2 - ՄԵՆԴԱԿԱՆՈՒԹ ԺԱՄԱՆԱԿ ՊԵՏԵ Ե ԸՐԱԺԱՐԻԼ ՏՈՒՐՄԵՆ:

ՄԽԱԼ. անշուշտ որ կարելի չէ սննդական ունի մը ընթացքին տուրմ ուտել, որովհետեւ, ինչպէս վերը նշեցինք, ան իւր եւ շաքար կը պարունակէ: Սակայն, եթէ ամբողջ շարժումն ընթացքին երկու փոքր կտոր (2 x 2) տուրմ ուտենք, մեր տրամադրութիւնը կը բարձրանայ եւ բոլորովին գրկուած չենք զգար:

- 3 - ՏՈՒՐՄԵ ԿԵ ԲԱՐՁՐԱՅՆԵ ԳԵՅ ԶՈՒՆԵՆԻՆ ԵՒ ՏՈՒՐՄԵ:

ՄԽԱԼ. 100 կրամը հազիւ 1,3 միլիկրամ քոլեսթերոլ կը պարունակէ, իսկ անդին՝ քաբառոյն կարգով, որ օլիկթթեան կը պարունակէ, կը պակասեցնէ «գէշ» քոլեսթերոլին տոկոսը՝ առանց պակասեցնելու լաւին տոկոսը:

- 4 - ՍԵՒ ՏՈՒՐՄԵ ԱՒԵԼԻ ԼԱՒ Ե ՄԵՐ ԱՌՈՂՁՈՒԹԵԱՆ:

ՄԽԱԼ. սարգապէս համի հարց է... սեւ տուրմը նուազ ջերմութ չի պարունակ:

նակեր: Կաթով տուրմը քառապատիկ կիր կը պարունակէ, քան սեւը. անիկա նաեւ շատ աւելի հարուստ է ֆոսֆորով:

- 5 - ՏՈՒՐՄԵ ԿՈՒՇԱՅՆԵ ԵՐՈՒԹԻՒՆԸ

ՃԻՇԴ. կարգ մը ուսումնասիրութիւններու համաձայն, տուրմին մէջի կարգ մը նիւթերը, որոնց կարգին՝ Լ. վիթաթէլիւնը, կ'ուսացնեն մեր բջիջներուն ծերացումը, ինչպէս նաեւ կը պայքարին քաղցկեղի որոշ տեսակներուն դէմ: Սակայն այս բոլորը ցարդ վերջնականօրէն փաստուած չեն:

- 6 - ՏՈՒՐՄԵ ԼԵԱՐԴԻ ՏԱԳՆԱՊ, ԴԵՍԵՐ ԲԵՏԻԿ ԵՒ ՂԵՄԱՆԱՒ ԿԵ ՊԱՏՃԱՆԵ:

ՄԽԱԼ. տուրմը դիւրամարս ուտելիք մըն է, բայց անոնք, որոնք իւրեքը դժուար կը մարսեն, թեւադրելի է, որ քիչ տուրմ սպառեն: Միւս կողմէ, բազմաթիւ ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, թէ տուրմը ոչ մէկ ազդեցութիւն ունի բնականօրէն վրայ: Վերջապէս, ինչ կը վերաբերի գլխու ցաւին, կասկածներ կան, որ ֆենիլթիլամին կոչուած նիւթը կրնայ պատճառ դառնալ գլխացաւին, այն պարագային, երբ օրական քանի մը կտոր տուրմ յաջորդաբար ուտուի:

- 7 - ԸՆԿՈՒՄԱՆՈՒԹԵԱՆ ԴԵՍ ՊԱՅՁԱՐԵԼՈՒ ՅԱՍՏՈՒԹԻՒՆԸ ՈՒՆԻ:

ՃԻՇԴ. տուրմին պարունակած քեոպրոմիլը, սերոթոնինը եւ մակնեգիտը դրական ազդեցութիւն կը գործեն մեր ջղային զրուծեան վրայ:

- 8 - ՏՈՒՐՄԵ ԴՐԱԿԱՆ ԱՃՌԵՑՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ՄԵՐ ՄՐՏԻՆ ՎՐԱՅ:

ՃԻՇԴ. նոր ուսումնասիրութեան մը համաձայն, տուրմին պարունակած փոլիֆենիլը վնասական դեր կրնայ խաղալ սրտանօթային հիւանդութիւններուն պարագային: Փոլիֆենիլը կրնայ նպաստել գէշ քոլեսթերոլին նուազումին, բայց մանաւանդ՝ արգիւել երակախցումը:

ՄԵՐ ԶԱՒԱԿՆԵՐԸ ԵՒ ՄԵՆԵ

ԿԱՂԱՆԳԻՆ ԻՆՉ ՆՈՒԻՐԵԼ

Բոլորս ալ կ'ուզենք անպայման հաճոյք պատճառել մեր զաւակներուն: Ոմանք զիւրուքեան կամ ժամանակ չհասնելու մտահոգութեամբ կը մտածեն զրամական նուէրի մասին, մանաւանդ որ զրամով անոնք կրնան գնել իրենց սիրածը, իրենց փափաքածը...

Սակայն ուրիշներ հարցին աւելի զգացական ձեւով կը մօտենան: Անոնց կարծիքով, ոչ զրամական նուէրը շատ աւելի խօսուն է, նուէրը կը վկայէ մեր տրամադրած ժամանակին, անձին հանդէպ մեր ցուցարեւած ուշադրութեան մասին: Նուէրին մէջ կայ նաեւ զայն ստանալու, ծրարէն դուրս բերելու եւ անակնկալի բաժինն ու անբացատրելի հաճոյքը:

ՀՈԳԵՐԱՆԻՆ ԿԱՐԾԻՔՈՎ

Մէկէ աւելի հոգեբաններու կարծիքը այն է, որ մեր օրերու երեխաները նուէրի իմաստով շատ շփացուած եւ բարտաւոր են:

Անոնց կարծիքով, 9 - 10 տարեկանէն սկսեալ կաղանդին զրամական նուէր մը կատարելը ոչ մէկ անպատեհութիւն կը ստեղծէ, ընդհակառակը՝ պզտիկին առիթ կու տայ, որ իր սիրածը գնէ եւ կամ իր խնայողութեան

վրայ աւելցնելով՝ իր ծրագրերը իրագործէ: Նոյն հոգեբաններուն կարծիքով, զրամական նուէր մը նաեւ երեխան կը դնէ որոշ պատասխանատուութեան առջեւ: Ան պիտի մտածէ, թէ ինչպէս պիտի ծախսէ զայն կամ արդեօք պիտի պահէ՞ ապագային հեծիկ մը կամ համակարգիչ մը գնելու համար:

Սակայն կարգ մը հոգեբաններ հարց կու տան, թէ զրամական նուէր մը ի՞նչ յուզում, ի՞նչ հաճոյք եւ, մանաւանդ, ապագային ինչ յիշատակ պիտի արթնցնէ ստացողին մէջ: Մինչդեռ ոչ ոք կը մոռնայ կաղանդի առիթով իր ստացած պուպիկը, հեծիկը, ատրճանակը կամ հանրագիտարանը... Արդեօք նոյնը կը պատահի՞ զրամական նուէրին հետ, անկասկած ոչ:

Սակայն կարելի է միջին ճամբայ մը գտնել: Եթէ անպայմանօրէն որոշած ենք զրամական նուէրը, անոր թող ընկերակցի կաղանդի բացիկ մը, ուր սրտազին մաղթանք մը, կամ անուշ երկու խօսք մը մեր ուշադրութիւնն ու համակրանքը ցուցարբերն պզտիկին հանդէպ:

Վերջապէս, կարելի է զրամական նուէրին կողքին խորհրդանշական պզտիկ նուէր մը նախատեսել, որպէսզի պզտիկը նուէր ստանալու, բանալու եւ անակընկալի գալու հաճոյքէն չզրկուի:

ԿԱՂԱՆԳԻ ՅԱՐԳԱՐԱՆՔ

ԿԱՍԻԱՅՈՎ ՄՈՍ

Մոմերը կաղանդի յարդարանքի կարելորագոյն գարդերն են:

